




GLOBAL SPC
BUSINESS & LEGAL CONSULTING

**ՀՀ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ԵՎ ԱՅԿ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**



ԵՐԵՎԱՆ - 2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	5
ԲԱԺԻՆ 1: ՄԱՔՍԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒԲԸՆԵՐՆ ՈՒ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ, ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ՍԵՐՄԵՐԻ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԵՏ	9
1. ՄԱՔՍԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԿԶԲՈՒԲԸՆԵՐԸ (ՄԱԳՀ)	11
1.1. ՀՀ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	13
1.2. ՀՀ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	13
1.3. ՀՀ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	13
1.4. ՀՀ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	15
1.5. ՀՀ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	15
1.6. ՀՀ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	16
1.7. ՀՀ ՍԵՐՄԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	17
ԲԱԺԻՆ 2: ՄԱԳՀ-Ի VI և XIX ՀՈՂՎԱՃՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ	19
2.1. ՀՀ ՀԱՎԱԳՆԱԳՑՄԱՆ (ՀԱՎԱԴԵՍՓԻՆԳԱՅԻՆ) ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	21
2.2. ՀՀ ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	23
ԲԱԺԻՆ 3: ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒԲԸՆԵՐԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԲԱՆԿԵՐԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ՏՈՒՐԻԶՄԻ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԵՏ	29
3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԿԶԲՈՒԲԸՆԵՐԸ (ԾԱԳՀ)	31
3.1. ՀՀ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	34
3.2. ՀՀ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	34
3.3. ՀՀ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	35
3.4. ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	36
3.5. ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	37
3.6. ՀՀ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	38
3.7. ՀՀ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ	39
3.8. ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ ...	39
ԲԱԺԻՆ 4: ԱՌԵՎՏՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒԲԸՆԵՐԸ, ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՈՐՏԸ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՈՒ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԵՏ:	41
4. ԱՌԵՎՏՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԿԶԲՈՒԲԸՆԵՐԸ (ԱՏԽ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ)	43
4.1. ՀՀ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐ	46

ԲԱԺԻՆ 5: ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՄԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ. ՇՐՋԱՆԱԿԸ, ՍԿՉԲՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԱՆԱՄԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ, ԲՈՒՅՍԵՐԻ, ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ՍԵՐՄԵՐԻ, ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԵՏ 49

 5. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՄԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԿՉԲՈՒՄՆԵՐԸ (ՍԲՍ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ) 51

 5.1. ՀՀ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ 53

 5.2. ՀՀ ԲՈՒՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ 54

 5.3. ՀՀ ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ 55

 5.4. ՍԵՐՄԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ 56

ԲԱԺԻՆ 6: ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱԿՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՉԲՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԼԻՑԵՆԶԻԱԿՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՀԵՏ 57

 6. ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱԿՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ (ՆԼԸ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ) 59

 6.1. ՀՀ ԼԻՑԵՆԶԻԱԿՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ 59

 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ 60

ՀԱՎԵԼՎԱԾ 1 63

 ԱՀԿ ԾԱՆՈՒՑՎԱԾ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ 65

ՆԱԽԱԲԱՆ

Առևտրի Համաշխարհային կազմակերպությունը իրականացնում է միջազգային առևտրային հարաբերությունների կարգավորումը: ԱՀԿ գործունեության հիմքն է կազմում բանակցությունների Ուրուզվայի փուլի արդյունքում համաձայնեցված փաստաթղթերի փաթեթ, ներառյալ անդամ-պետությունների համար համանման ուժ ունեցող համաձայնագրեր, պարտավորություններ, փոխհամաձայնություններ, հռչակագրեր, արձանագրություններ, որոշումներ և այլն: Հաշվի առնելով առևտրի կարգավորման մասով նաև ավելի ուշ կնքված համաձայնագրերը (հեռահաղորդակցության մասին, ֆինանսական ծառայությունների մասին, գլոբալ էլեկտրոնային առևտրի մասին և այլ Համաձայնագրեր) նրանց թիվը հասավ 60-ի:

Փաստաթղթերի ճշող մեծամասնությունը պարտադիր են ԱՀԿ բոլոր անդամների համար և միայն երկու համաձայնագրեր են, որ պարտադիր են միայն դրանցում մասնակցելու մեջ շահագրգռված երկրների համար. պետական գնումների մասին, քաղաքացիական օդագնացության առևտրի մասին համաձայնագրերը: ԱՀԿ որոշ փաստաթղթեր, ավելի արդյունավետ դարձնելով, լրացնում էին ՄԱԳՀ-ի որոշ հոդվածներ:

Խորհրդային Միության անկումից հետո Հայաստանի Հանրապետությունը կազմավորեց իր առևտրային և տնտեսական քաղաքականությունը՝ հաշվի առնելով իր աշխարհաքաղաքական դրությունը, բնական պաշարների սակավությունը և սահմանափակ ներքին շուկան: Այս քաղաքականությունը հիմնվում էր ազատական սկզբունքների վրա՝ ի նկատի ունենալով ազգերի առավել բարենպաստության ռեժիմը, առևտրի համար առկա նվազող տեխնիկական խոչընդոտները, ոչ տարիֆային վերահսկողության պակասող միջոցները, արտահանման քվոտայի և արտահանման վճարների կրճատումը, ցածր մաքսային սակագները և այլն: Այս սկզբունքների հիման վրա, որոնք ակնհայտորեն նման են ԱՀԿ սկզբունքներին, Հայաստանը մշակեց իր առևտրային և տնտեսական օրենսդրական դաշտը: ԱՀԿ անդամ դառնալը վերահաստատեց, որ այս օրենքները համապատասխանում են միջազգային նորմերին:

Դեռևս 1992թ. Հայաստանի Հանրապետությունը դիմել էր Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրին միանալու հայցով, սակայն 1995թ. այս Համաձայնագիրը վերակազմավորվեց Առևտրի Համաշխարհային կազմակերպության և ըստ էության Հայաստանի դիմումը վերաճակերպված ԱՀԿ անդամակցելու հայցի: Երկարատև բանակցային գործընթացն ավարտվեց: 2003թ. փետրվարի 5-ին Հայաստանը պաշտոնապես դարձավ ԱՀԿ 145-րդ անդամը: ԱՀԿ անդամ-երկրների հետ երկկողմ և բազմակողմ բանակցությունները ավարտվել էին դեռևս 2002թ.: Այս կապակցությամբ Հայաստանը իր վրա մի շարք պարտավորություններ էր վերցրել, որոնք էլ հանգեցրին թե արտաքին առևտրին և թե դրա հետ անմիջական կապ չունեցող ոլորտների հետ կապված մի շարք իրավական բարեփոխումների: Երկկողմ բանակցությունները անց էին կացվել ապրանքների և ծառայությունների խնդիրների շուրջ, իսկ բազմակողմ բանակցությունները անդրադարձան Հանրապետության առևտրային և տնտեսական օրենսդրության այն խնդիրներին, որոնք առնչվում էին ԱՀԿ համաձայնագրերի փաթեթի հետ:

ԱՀԿ անդամակցության փաստաթղթերի փաթեթը, ՀՀ Սահմանադրության համաձայն, հաստատվել է ՀՀ Սահմանադրական դատարանի, ընդունվել է Ազգային ժողովի և վավերացվել է նախագահի կողմից:

Ինչ վերաբերում է երկկողմանի բանակցություններին, ապա Հայաստանը պարտավորվել է ԱՅԿ միանալու օրից չկիրառել մաքսային արժեքի 15% բարձր ներմուծման մաքսատուրք: Գործնականում ներմուծման մաքսատուրքերի դրույթաչափից ավելի ցածր պարզեցված համակարգ է կիրառվում:

ԱՅԿ համաձայնագրերի հետ իրավական բազայի համապատասխանեցման հարցի առումով բազմակողմանի բանակցությունների առումով, ՀՀ կառավարությունը մշակել է մի շարք օրենսդրական նախագծեր, որոնք վերաբերում են այնպիսի կարևոր դաշտերի կարգավորմանը, ինչպիսիք են ապրանքների մաքսային գնահատումը, մտավոր սեփականության իրավունքի առևտրային կողմերը, առևտրի տեխնիկական խոչընդոտները, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումները, բուժման տնտեսությունը և այլն: Բոլոր այս օրենսդրական ակտերը ընդունվել են Ազգային ժողովի կողմից:

Այս հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀՀ առևտրատնտեսական դաշտը կարգավորող և ԱՅԿ համաձայնագրերին առնչվող ՀՀ մի շարք օրենքների համապատասխանությունը ԱՅԿ համաձայնագրերի հետ:

Համաձայնագրերի դրույթները կիրառելու պարտավորությունից բացի, Հայաստանն ԱՅԿ անդամակցությամբ ստանձնել է մի շարք այլ պարտավորություններ, որոնք տեղ են գտել Հայաստանի անդամակցության աշխատանքային խմբի զեկույցում և համապատասխան ժամանակացանկերում: Հետազոտությունն ամբողջական դարձնելու նպատակով, ի լրումն միջուկային հայտով ՀՀ առևտրատնտեսական օրենքների ուսումնասիրության, Գլոբալ Էս-Փի-Սի-ն իրականացրել է նաև ՀՀ ԱՅԿ անդամակցությամբ ստանձնած և իրավական կարգավորում պահանջող պարտավորությունների իրականացման ուսումնասիրություն:

Իհարկե պետք է ասել, որ սույն հետազոտությունը չի կարող միանշանակ պատասխան տալ այն հարցին, թե արդյոք ՀՀ օրենսդրությունը իր ողջ ծավալով լիովին համապատասխանում է ԱՅԿ օրենսդրությանը թե ոչ, սակայն միևնույն ժամանակ հաշվի առնելով թե այն աշխատանքները, որոնք տարվել են մինչ անդամակցությունը, թե վերջին տասնամյակում կիրառվող իրավաստեղծ մեխանիզմները, պետք է ակնկալել, որ անհամապատասխանությունները հիմնականում տեխնիկական բնույթի են և պայմանավորված են Հայաստանում առկա վարչարարական և սոցիալական առանձնահատկություններով:

Իրականացված հետազոտությունը չի ներառում ՀՀ առևտրատնտեսական ոլորտին առնչվող ՀՀ բոլոր օրենքները: Այդ օրենքների մի մասը նախքան հետազոտական աշխատանքների սկսելը, արդեն իսկ ծանուցված էր ԱՅԿ և համապատասխանեցված էր ԱՅԿ համաձայնագրերի պահանջներին (ծանուցված օրենքների ցանկը տես հավելված 1):

Սակայն քանի որ ՀՀ պետական կառավարման մարմիններում դեռևս բացակայում է համապատասխան իրավական ակտերը սահմանված կարգով ծանուցելու մշակույթը, ենթադրվում էր, որ որոշ օրենքներ դուրս են մնացել ուշադրությունից և չեն ծանուցվել:

Ուսումնասիրության առարկա օրենքների ցանկը դուրս հանելու նպատակով նախ առանձնացվել են ՀՀ առևտրատնտեսական դաշտը կարգավորող օրենքները, որոնցից հանվել են ծանուցված օրենքները (որոնք ենթադրվում է որ համապատասխանում են ԱՅԿ պահանջներին): Ծանուցված որոշ օրենք-

Ներ այնուամենայնիվ դարձել են ուսումնասիրության առարկա՝ ժամանակի ընթացքում դրանցում կատարված փոփոխությունների պատճառով: Այնուհետև առանձնացված օրենքները ենթարկվել են ուսումնասիրության ԱՅԿ համապատասխան համաձայնագրերի պահանջների կատարման տեսանկյունից:

Ուսումնասիրելով 2003թ.-ից հետո ընդունված բոլոր օրենքները, ճշգրտվել և վեր են հանվել ուսումնասիրման ենթակա օրենքների ցանկը.

1. Բանկերի և բանկային գործունեության մասին
2. Տրանսպորտի մասին
3. Դեղերի մասին
4. Բնապահպանման և բնօգտագործման վճարների մասին
5. Ստանդարտացման մասին
6. Բուսական աշխարհի մասին
7. Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին
8. Կենդանական աշխարհի մասին
9. Ներքին շուկայի պաշտպանության մասին
10. Լիցենզավորման մասին
11. Պարենային անվտանգության ապահովման մասին
12. Հակազնազցման (հակադեմփինգային) և փոխհատուցման միջոցների մասին
13. Աուդիտորական գործունեության մասին
14. Հաշվապահական հաշվառման մասին
15. Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին
16. Համապատասխանության գնահատման մասին
17. Առևտրի և ծառայությունների մասին
18. Թափոնների մասին
19. Սերմերի մասին
20. Անասնաբուժության մասին
21. Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին
22. Բնապահպանական վճարների դրույթաչափերի մասին
23. Վարկային կազմակերպությունների մասին
24. Երկաթուղային տրանսպորտի մասին

Բուն հետազոտությունը բաղկացած է երկու մասից:

Առաջին մասում ուսումնասիրվում են ՀՀ աուդիտորական գործունեության, առևտրի և ծառայությունների, բանկերի, տրանսպորտի, հաշվապահական հաշվառման, վարկային կազմակերպությունների, տուրիզմի, երկաթուղային տրանսպորտի, հակազնազցման, ներքին շուկայի պաշտպանության, ստանդարտացման լիցենզավորման, բուսական աշխարհի, անասնաբուժության թափոնների, համապատասխանության գնահատման, սերմերի, կենդանական աշխարհի մասին, պարենային անվտանգության, ներմուծման լիցենզավորման մասին օրենքները Մաքսերի և առևտրի մասին գլխավոր համաձայնագրի, Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագրի, Հակազնազցման, Ներմուծման լիցենզավորման մասին, Պաշտպանական միջոցների մասին, Սանիտարական և բուսասանիտարական միջոցների մասին, համաձայնագրերի հետ:

Համեմատության իրականացման ընթացքում նախևառաջ վեր են հանվում թե ԱՀԿ գործունեության հիմնարար սկզբունքները և, թե այս կամ այն համաձայնագրում տեղ գտած մոտեցումներն ու պահանջները: Այսպիսով խնդրո առարկա հանդիսացող օրենքները ենթարկվում են երկակի քննության: Առաջին շերտում հետազոտվում է թե արդյոք իրենց բուն էության մեջ օրենքները համապատասխանում են ԱՀԿ ոգուն, այն է՝ հիմնարար սկզբունքներին, մոտեցումներին և չափանիշներին, որոնք դրված են թե ԱՀԿ հիմքում և, թե արտացոլվել են վերջինիս համաձայնագրերում: Իսկ երկրորդ շերտում համեմատվում է հենց իրենց՝ օրենքների հիփոթեզի բովանդակությունը՝ Համաձայնագրերի տեքստերի հետ և վեր հանում հակասություններն ու անճշտությունները, եթե դրանք առկա են:


Ուսումնասիրության երկրորդ մասը անդրադառնում է արդեն հետանդամակցային փուլում ՀՀ ստանձնած պարտավորություններին, որոնք արդեն ներառում են ԱՀԿ ողջ փաթեթը: Թվով շուրջ 39-ը այս պարտավորությունները նախևառաջ արտացոլվել են ԱՀԿ աշխատանքային խմբի զեկույցում, իսկ այնուհետև իրենց պարտավորային ամրագրումն են ստացել ՀՀ անդամակցության արձանագրության մեջ:

Հիմք ընդունելով հենց վերոնշյալ փաստաթուղթը մենք շոշափել ենք այն հիմնական ոլորտները, ուր Հայաստանը պարտավորվել էր փոփոխություններ իրականացնել և նկարագրել ենք արդեն կատարված կամ մոտակա շրջանում կատարվելիք փոփոխությունները: Այստեղ էլ հիմնական շեշտը դրվել է այն օրենսդրական փոփոխությունների և դրանց բուն բովանդակության վրա, որոնք էլ հենց ապահովել են ՀՀ ԱՀԿ նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարումը:

Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ կիրառվող մոտեցման հիմքում ընկած էր այն գաղափարը, որ ընթերցողը պետք է նախևառաջ պատկերացում կազմի այս կամ այն ոլորտի կառավարող սկզբունքների մասին և նոր միայն անցնի բուն իրավական տեքստի քննարկմանը և հնարավոր տարածայնությունների բացահայտմանը: Նման մոտեցումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ԱՀԿ շրջանակներում առաջնային տեղը տրամադրվում է հենց անկյունաքարային սկզբունքներին և նոր միայն դրանց վրա հենվում է ճյուղային ոլորտներում սահմանված պարտավորությունների:

ԲԱԺԻՆ 1

ՄԱՔՍԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ.
ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ,
ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ, ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ՍԵՐՄԵՐԻ ԵՎ
ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԵՏ



1. ՄԱՔՍԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ (ՄԱԳՅ)

ՄԱԳՅ-ը կնքվել է երկրորդ աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո: Կողմերը համաձայնվել էին բազմակողմանի միահամուռ ջանքեր գործադրել, որոնք հիմնականում նպատակաուղղված կլինեին մաքսատուրքերի մի շարք կրճատումների միջոցով ազատականացնել առևտուրը:

Չորս սկզբունքներ կազմում են կողմերի միջև ամենակարևոր, սակայն ոչ բացարձակ բովանդակային պարտավորությունները:

Հիմնական սկզբունքներից մեկը, որը սահմանված է հոդված I-ում, դա Ազգերի առավել բարենպաստության սկզբունքն է: Սա այն սկզբունքն է, որը երկար տարիներ եղել է «միջազգային առևտրային իրավունքի հիմնաքարը», որը պահանջում է, որ ցանկացած կողմ յուրաքանչյուր այլ կողմի ամեն մի ներկրման կամ արտահանման մասով շնորհում է ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, քան այն, որը տրվում է յուրաքանչյուր ուրիշ ազգի: Այսպիսով նշված սկզբունքը երաշխավորում է, որ մի կողմից մյուսին տրվող առևտրային առավելություններն ու արտոնությունները, անկախ այն հանգամանքից, թե վերջինս ԱՀԿ համաձայնագրի կողմ է թե ոչ, կտրվեն նաև համաձայնագրի կողմ հանդիսացող յուրաքանչյուր երկրի: Այս սկզբունքի համաձայն երկրները պետք է միմյանց այնպիսի բարենպաստ վերաբերմունք տրամադրեն, ինչպիսին որ տրամադրում են իրենց լավագույն առևտրային գործընկերոջը կամ էլ ցանկացած այլ երկրի: Նմանօրինակ կերպով, եթե երկիրը որոշում է «ժամանակավորապես պաշտպանել իր տեղական արտադրությունը, քանի որ արտադրության այդ ճյուղը լրջորեն վտանգված է, ապա նոր ծագած խոչընդոտները պետք է կիրառվեն բոլոր երկրների նկատմամբ, եթե նույնիսկ վտանգը արտադրության տվյալ ճյուղին կարող է գալ միայն մեկ երկրից»: Այսպիսով Ազգերի առավել բարենպաստության սկզբունքը երկկողմանի առևտրի տիրույթից տեղափոխվում է բազմակողմ առևտրի տիրույթ: Իր եռությամբ այդ սկզբունքը «բազմակողմանիացնում» է առևտրի ազատականացումը (առնվազն այն առումով ինչ վերաբերում է պարտավորություններին և բանակցություններին) և նշանակալից խթաններ է տալիս ոչ-անդամ պետություններին՝ համաձայնագրին միանալու համար:

ՄԱԳՅ համակարգի մյուս հիմնական սկզբունքը, որը սահմանվել է համաձայնագրի հոդված երկրորդում, այն է, որ կողմերը այս կամ այն ապրանքի համար չեն գանձի մաքսատուրքերի ժամանակացանկում համաձայնեցված և սահմանված մակարդակից ավելի բարձր մաքսատուրքեր: Ավելի հստակ լինելու համար, մաքսատուրքերն իրենք, որպես այդպիսին, օրինական են և կողմերը կարող են ցանկացած մաքսատուրք գանձել այն ապրանքատեսակների համար, որոնք թվարկված չեն ցանկում: Սակայն եթե «մաքսատուրքային պարտավորեցումը» արդեն բանակցվել է, ապա կողմերը պարտավոր են վճարը գանձել սահմանվածի կամ դրանից ցածր սակագնի չափով: Այս պարզ պարտավորությունը ինստիտուցիոնալ հիմքեր է ստեղծում բանակցությունների և փոխադարձ պարտավորությունների միջոցով «զտելու» առևտրի համար ծագող արհեստական խոչընդոտները: Սա համեմատորեն հեշտ պարտավորություն է, որը կարող է վերահսկվել՝ համապատասխանության նպատակներից ելնելով: Նախևառաջ պարտավորությունն, ինքնին, բավականին պարզ է ձևակերպված և արդեն ենթակա չէ վերաբանակցման կամ լայն մեկնաբանման, իսկ հենց մաքսատուրքերի ցանկերը հստակ, հանգամանալից, քանակական հիմնագիծ են ապահովում համապատասխանության չափման համար: Երկրորդ՝ ինչ վերաբերում է անհամապատասխանության բացահայտմանը, ապա «կառավարությունները

և միջազգային կազմակերպությունները վիճակագրության «սարեր» են հավաքագրում, այն պարագայում, երբ մաքսատուրքերի ցուցակները հանրամատչելի են և գոյություն ունի մաքսային ծառայության միջոցով ապրանքներին հետևելու հնարավորությունը»:

Հաջորդ հիմնական սկզբունքը ամրագրված է Հոդված III-ում, այն է ներքին հարկման և կարգավորման նկատմամբ ազգային մոտեցման կիրառումը: Խտրականություն չկիրառելու այս սկզբունքը, որն առնչվում է ներքին հարկմանն ու կարգավորմանը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք է ցուցաբերում այլ անդամ պետությունից ստացվող ներմուծման նկատմամբ, քան երկրի ներսում արտադրված ապրանքներին: Այսինքն, անդամ-երկրները պետք է իրենց տեղական արտադրությունը պաշտպանեն միայն մաքսատուրքերի միջոցով՝ միայն այն պարագայում, երբ անհրաժեշտություն է ծագել և եթե դա թույլատրվում է:

Ի վերջո, վերջին հիմնական սկզբունքը բացահայտված է XI հոդվածում և պարտադրում է, որ «Որևէ պայմանավորվող կողմ, որևէ այլ կողմի տարածքի, որևէ արտադրանքի ներմուծման կամ որևէ այլ պայմանագրի կողմի տարածքի համար նախատեսված արտահանվող կամ արտահանման համար վաճառքի տուրքերից, հարկերից և այլ վճարներից բացի այլ արգելքներ կամ սահմանափակումներ չի սահմանում կամ պահպանում՝ անկախ այն բանից, թե դրանք իրականացվում են քվոտաներով, արտահանման կամ ներմուծման լիցենզիաներով, թե այլ միջոցներով»: Իրենց բնույթով այս երկու վերջին ՄԱԳՀ սկզբունքները, մի շարք այլ դրույթների հետ միասին, սահմանափակում են կառավարության՝ ներմուծման ու արտահանման վրա ազդող գործողությունները և նպատակամղված են սահմանափակելու այն միջոցները, որոնք կարող են փոխարինել մաքսատուրքերը որպես հովանավորչության գործիքներ և պահպանել հավանական շահույթները:

Այդ առումով կարելի է խոսել ևս մեկ առանձին սկզբունքի մասին, որն իր էությունը տարբերվում է վերը թվարկվածներից, սակայն նույնպես նշանակալիորեն փոփոխում է միջազգային առևտրի բնութագիրը: Դա առևտրի հիմնախնդիրների շուրջ անդամ-պետությունների՝ միմյանց հետ բանակցելու պարտավորությունն է: Եվ եթե նախորդ չորս սկզբունքները հիմնարար ինստիտուցիոնալ շրջանակ են ստեղծում մաքսատուրքերի փոխադարձ արտոնման միջոցով միջազգային առևտրի ազատակալանացման համար, ապա վերջինս կարգավորման ձևաչափ է սահմանում բանակցությունների համար և արդյունքները փոխակերպում է իրավական գործիքների: ՄԱԳՀ-ն այսպիսով նաև հարթակ է ստեղծում մաքսատուրքերի վերաբերյալ բանակցությունների համար:

1.1. ՀՀ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Խոսելով վերլուծման առարկա ՀՀ օրենքների մասին, նախևառաջ անդրադառնանք 2005թ. հոկտեմբերի 24-ին ընդունված «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքին, որի կարգավորման առարկան է հանդիսանում անասնաբուժության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի և ՀՀ-ում գործող ֆիզիկական և իրավաբանական անձանց հարաբերությունները:

Այս օրենքի և համաձայնագրի միջև զուգահեռներ անցկացնելիս կարելի է եզրակացնել, որ նրանք շատ ընդհանրություններ չունեն: Մասնավորապես, համաձայնագրի 20-րդ հոդվածում, հաշվի առնելով Անդամ պետությունների նկատմամբ խտրականություն չկիրառելու սկզբունքը, իրենց ամրագրումն են ստացել որոշակի բացառություններ: Վերջիններիս թվին է դասվում հատկապես այն, որ տվյալ համաձայնագիրը չի կարող մեկնաբանվել, թե արգելում է ընդունել կամ կիրառել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են մարդու, կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը պահպանելու համար: Սա նշանակում է, որ տվյալ Համաձայնագիրը ոչ թե արգելում է Անդամներին իրականացնել կենդանիների կյանքին կամ առողջությանը նպաստող միջոցառումներ, այլ կարելի է ասել ընդհակառակը՝ նպաստում է դրանց:

Օրենքն իր հերթին սահմանում է, որ անասնաբուժական ծառայության գործունեության հիմնական ինդիկատորն են՝

- կենդանիների և մարդկանց համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պաշտպանումը;
- կենդանիների պաշտպանությունը վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններից՝ ապահովելով հակաանասնահամաճարակային կանխարգելիչ և հարկադիր, ախտորոշիչ, անասնաբուժասանիտարական և այլ անհրաժեշտ միջոցառումների իրականացումը և այլն:

Օրենքի 5-րդ հոդվածը անասնաբուժության բնագավառում ՀՀ կառավարության լիազորությունների շարքում առանձնացնում է գյուղատնտեսական կենդանիների, կենդանական ծագման հումքի և մթերքի, ինչպես նաև կերերի և լրացակերերի արտահանման ու ներմուծման կարգի սահմանումը: Ընդ որում՝ այս կարգը պետք է համապատասխանի և չհակասի միջազգային պայմանագրերի դրույթներին: Իսկ 16-րդ հոդվածի համաձայն՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման ու վերացման համալիրում ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականություններից է կենդանիներ, կենդանական ծագման մթերք և հումք, կերեր ու լրացակերեր, անասնաբուժական դեղամիջոցներ ներմուծել և արտահանելը կամ դրանց տարանցիկ փոխադրումն իրականացնելը՝ բացառապես տվյալ օրենքին և միջազգային անասնաբուժական օրենսդրության պահանջներին համապատասխան: Ավելին, անասնաբուժական ծառայություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, անասնաբուժական պետական տեսուչն իրենց բազմատեսակ իրավունքներին և պարտականություններին զուգահեռ պատասխանատվություն են կրում իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, իրավասությունները գերազանցելու, պետական և առևտրային գաղտնիք համարվող տեղեկություններ հրապարակելու դեպքերում:

Փաստորեն, կարելի է հետևել, որ այս օրենքի և Համաձայնագրի ընդհանուր գծերը քիչ են և չեն հակասում ՄԱԳՅ-ի հետ:

1.2. ՀՀ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Գրեթե նույնը վերաբերում է 1999թ. նոյեմբերի 23-ին ընդունված «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքին: Վերջինս սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը՝ բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, պարտականությունները, ինչպես նաև նրանց պատասխանատվությունն այս ոլորտում:

Հիմնվելով ՄԱԳՀ վերոնշյալ նույն 20-րդ հոդվածի վրա՝ կարող ենք անել որոշ հետևություններ: Ըստ օրենքի 3-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում բուսական աշխարհի մասին օրենսդրության խնդիրներն են՝

- բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և գենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական ապահովումը.
- բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը.
- բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը.
- բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

Նույն օրենքի 15-րդ հոդվածն ամրագրում է, որ ՀՀ-ում բուսական աշխարհի պահպանության և պաշտպանության խնդիրներից են՝ բույսերի և դրանց բազմազան օրգանների ապօրինի ներմուծման ու արտահանման կանխելը: Այսպիսով տվյալ օրենքը հակասություններ չունի ՄԱԳՀ-ի հետ:

1.3. ՀՀ ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Համաձայնագրի հետ քիչ ընդհանրություններ ունենալու առումով բացառություն չի կազմում նաև 2000թ. ապրիլի 3-ին ընդունված «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը: Վերջինս սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

Նրա նպատակն է՝

- գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը.
- կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը.
- կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությունը.
- կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը.
- կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը.
- կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

Այս օրենքում տեղ գտած մյուս դրույթները չեն առնչվում տվյալ Համաձայնագրին:

1.4. ՀՀ ԹՎՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Ինչ վերաբերում է «Թափոնների մասին» ՀՀ օրենքին, ապա այն կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

Օրենքի 5-րդ հոդվածն ամրագրում է նրա հիմնական խնդիրները, այդ թվում՝ թափոնների նվազագույն քանակությամբ գոյացման ապահովումը, տնտեսական գործունեության մեջ դրանց օգտագործման ընդլայնումը, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա թափոնների վտանգավոր ներգործության նվազեցումը, իսկ 6-րդ հոդվածը որպես թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունք սահմանում է՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանությունը թափոնների բացասական ներգործությունից, ինչպես նաև նյութահումքային և էներգետիկ ռեսուրսների բանական օգտագործման ապահովումը: Այստեղ կարելի է մեջբերել Համաձայնագրի նպատակներից մեկը, ըստ որի՝ Անդամ պետությունները նպատակ են հետապնդում զարգացնել համաշխարհային պաշարների լավագույնս օգտագործումը և ընդլայնել ապրանքների արտադրությունն ու փոխանակումը:

Այսպիսով, ուսումնասիրելով 1.1, 1.2, 1.3, 1.4 գլուխներում նշված օրենքները, ակնհայտ է դառնում, որ իրենց բնույթով դրանք չեն արտացոլում Համաձայնագրի դրույթները և կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունների բոլորովին այլ ոլորտներ: Այսինքն՝ վերոնշյալ օրենքների և Համաձայնագրի միջև ամենաբնութագրականները բավականին քիչ են և դրանք ՄԱԳՀ հետ կապված որևէ հակասություններ չեն պարունակում:

1.5. ՀՀ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Այլ է պատկերը 2001թ. մայիսի 30-ին ընդունված «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում: Այն սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և կարգավորում է լիցենզավորման հետ կապված հարաբերությունները: Այն կոչված է սահմանելու լիցենզավորման սկզբունքները, նպատակները, պայմաններն ու վավերապայմանները և այլն: Այստեղ հարկ է վկայակոչել ՄԱԳՀ հիմնական նպատակները: Վերջիններիս թվին են դասվում կենսամակարդակի բարձրացումը, բոլոր Անդամ պետությունների տնտեսությունների առաջընթաց զարգացումը, ապրանքների արտադրության ու փոխանակման ընդլայնումը: Համաձայնագրի 36-րդ հոդվածը, առավել մանրամասն սահմանելով Անդամների նպատակները, 4-րդ կետում ամրագրում է, որ կողմերը պայմանավորվում են մշակել այնպիսի միջոցներ, որոնք կոչված են ապահովելու կայուն, արդար ու շահավետ գներ, ինչն էլ բնականաբար, սպառողների օգտին է:

Այս առումով նշված օրենքի համաձայն՝ լիցենզավորման նպատակներից մեկը հանդիսանում է ապրանքների և ծառայությունների որակի բարձրացումը, սպառողների իրավունքների պաշտպանությունը (հոդված 5): Փաստորեն, այս օրենքի դեպքում ընդհանրություններն իրենց եությամբ բավականին տարբերվում են նախորդներից և տարածվում են բոլորովին այլ ոլորտների վրա, հետևաբար ՄԱԳՀ հետ կապված որևէ հակասություններ չեն պարունակում:

1.6. ՀՀ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Համաձայնագրի հետ իր առնչություններով առանձնահատուկ է նաև 2004թ. մայիսի 26-ին ընդունված «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքը: Վերջինս կարգավորում է սահմանված պահանջներին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, որակի և բնապահպանական կառավարման համակարգերի, անձանց համապատասխանության պարտադիր ու կամավոր հավաստման աշխատանքների կազմակերպումը, դրանց նկատմամբ իրականացվող պետական վերահսկողության իրավական հիմքերն ու կարգը և այլն:

Վերոնշյալ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է, որ համապատասխանության գնահատման նպատակներն են՝

- մարդու կյանքի, առողջության, ֆիզիկական ու իրավաբանական անձանց և պետական գույքի անվտանգության ապահովումը,
- կենդանիների և բույսերի կյանքի ու առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանությունը՝ ձեռնարկատիրական և արտադրական գործունեության վնասակար ազդեցությունից,
- արտադրանքի կամ ծառայության նկատմամբ սպառողների վստահության ապահովումը և նրանց թյուրիմացության մեջ գցող գործոնների կանխումը,
- ներքին և արտաքին շուկաներում արտադրանքի տեխնիկական խոչընդոտների վերացումը, ինչպես նաև միջազգային տնտեսական, գիտատեխնիկական համագործակցության և միջազգային առևտրում մասնակցելու համար բարենպաստ պայմանների ստեղծումը և այլն:

Այս նպատակները համապատասխանում են ՄԱԳՀ մի շարք դրույթներին: Մասնավորապես, Համաձայնագրի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ զարգացած անդամները մեծ առաջնություն են տալիս այն արտադրանքների նկատմամբ կիրառվող խոչընդոտների կրճատմանը կամ վերացմանը, որոնք արտահանման առումով հատուկ հետաքրքրություն են ներկայացնում ավելի քիչ զարգացած անդամների համար: Եվ հենց ՄԱԳՀ նպատակներն ընդգրկում են արտադրանքների նկատմամբ կիրառվող, առևտրի խոչընդոտների նվազեցմանն ու վերացմանը:

Բացի դրանից, ըստ ՄԱԳՀ-ի անդամ երկիրը կարող է կիրառել տուրք կամ տուգանք՝ արտադրանքների մակնշման ուղղումն անհիմն կերպով հետաձգելու, շփոթեցնող մակնիշներ փակցնելու կամ պահանջվող մակնշումը դիտավորյալ կերպով չկատարելու դեպքում (9-րդ հոդված, 5-րդ կետ): Այս դրույթը երաշխիք է հանդիսանում սպառողների իրավունքների պաշտպանության համար, ինչպես նաև արտադրանքների նկատմամբ նրանց վստահության ապահովման համար:

Համաձայնագրի 36-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերն ամրագրում են, որ անհրաժեշտություն կա այնպիսի դրական աշխատանքներ կատարելու, որոնք ուղղված են ապահովելու, որ ավելի քիչ զարգացած անդամներն աճող միջազգային առևտրում երաշխավորված բաժին ունենան՝ իրենց տնտեսական զարգացման կարիքներին համապատասխան, և որ անհրաժեշտ է դեպի համաշխարհային շուկաներ առաջնային արտադրանքների համար մուտքի առավել բարենպաստ ու ընդունելի պայմաններ ապահովել ամենալայն հնարավորության չափով և նպատակահարմարության դեպքում մշակել այնպիսի միջոցներ, որոնք կոչված են ապահովելու կայուն, արդար ու շահավետ գներ: Այս դրույթներն իրենց հերթին հնարավորություն են ընձեռում միջազգային առևտրում մասնակցելու բարենպաստ պայմաններ ստեղծելու համար:

1.7. ՀՀ ՍԵՐՄԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Եթե համադրենք ՄԱԳՀ 2005թ. մայիսի 20-ին ընդունված «Սերմերի մասին» ՀՀ օրենքի հետ, ապա կարող ենք հաստատել, որ նրանք մեծ ընդհանրություններ չունեն այն պատճառով, որ այս օրենքի կարգավորման առարկան ներառում է բացառապես բույսերի օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի գրանցման, սերմերի արտադրության, վերարտադրության, հավաստագրման, փոխադրումների, պահպանության, իրացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Այնուամենայնիվ կարող ենք տարանջատել որոշ առնչություններ:

Տվյալ օրենքը միջազգային իրավասու կազմակերպություններին է վերապահում ՀՀ-ից արտահանման համար նախատեսված սերմերի տարբեր դասերի որակական ցուցանիշների գնահատման ընթացակարգի և որակի գնահատման կանոնների սահմանումը (հոդված 8):

Իր հերթին օրենքի 9 հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ փոխադրման և իրացման համար նախատեսված հավաստագրված սերմերի յուրաքանչյուր խմբաքանակ փաթեթավորվում, տարավորվում և դրոշմվում է՝ պիտակի կամ տարայի վրա՝ նշելով սերմերի ծագման և որակի մասին տեղեկատվությունը՝ գրված, տպված կամ գրաֆիկական տեսքով: Այս առումով ՄԱԳՀ 9-րդ հոդվածի 5-րդ կետը նախատեսում է հատուկ տուրք կամ տուգանք այն դեպքերում, երբ մակնշման ուղղումն անհիմն կերպով հետաձգվել է, կամ շփոթեցնող մակնիշեր են փակցվել կամ պահանջվող մակնշումը դիտավորյալ կերպով չի կատարվել: Այսինքն՝ այս դրույթը հանդիսանում է նորմ-երաշխիք այն առումով, որ սերմերի մասին տեղեկատվությունը պիտակի կամ տարայի վրա պետք է համապատասխանի իրական տվյալներին:

Բացի վերոնշյալ դրույթներից, հարկ է անդրադառնալ նաև օրենքի 11-րդ հոդվածին, ըստ որի՝ մշակաբույսերի սերմերի ներմուծումը ՀՀ թույլատրվում է, եթե՝

- սերմերը նախատեսված են գիտահետազոտական աշխատանքների և սորտափորձարկման նպատակների համար,
- ներմուծվող սորտը գրանցված է օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի ցանկում և ներկայացվում են սերմերի խմբաքանակի սորտային պատկանելիության և որակական ցուցանիշների՝ արտահանող երկրի իրավասու կազմակերպության տված հավաստագրերը:

Սակայն, նույն հոդվածի 4-րդ կետը այս դրույթից որպես բացառություն է սահմանում «տարանցիկ փոխադրում», «ներմուծում մաքսային պահեստ» և «ներմուծում ազատ մաքսային պահեստ» մաքսային ռեժիմները: Այսինքն՝ օրինակ, տարանցիկ փոխադրման դեպքում սերմերի համար որևէ սահմանափակում չի նախատեսվում:

Այնուհետև հաջորդ կետի համաձայն՝ ՀՀ մշակաբույսերի սերմերի ներմուծման և ՀՀ-ից դրանց արտահանման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Ընդ որում՝ այս կարգը պետք է բխի միջազգային պայմանագրերի պահանջներից (այդ թվում ՄԱԳՀ պահանջներից) և չպետք է որևէ հակասություն պարունակի վերջիններին հետ:

Այս օրենքի դրույթների խախտումը բոլոր դեպքերում առաջ է բերում պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:


Փաստորեն, հիմնականում այս ընդհանրություններով էլ սահմանափակվում են «Սերմերի մասին» օրենքի և ՄԱԳՀ առնչությունները, որոնցից կարելի է եզրակացնել, որ չնայած այն հանգամանքին, որ տվյալ օրենքի միայն մի մասն է առնչվում համաձայնագրի պահանջների հետ, այնուամենայնիվ, օրենքը ՄԱԳՀ հետ կապված որևէ հակասություն չի պարունակում և համապատասխանում է վերջինիս դրույթներին:

Հարկ է նկատել, որ Բաժին 1- ում նշված բոլոր օրենքները, այնուամենայնիվ, նախատեսում են միջազգային իրավունքի գերակայությունը՝ սահմանելով, որ եթե ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, որոնք նախատեսված չեն սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ մի կողմից ՄԱԳՀ շրջանակներում չեն շոշափվել բացառապես ներպետական կարգավորմանը ենթակա խնդիրները, որոնք ազգային օրենսդրության մեջ իրենց կարգավորումն են ստացել առավել մանրակրկիտ կերպով, սակայն մյուս կողմից, ինչպես որ վերը նշվեց, քննարկված օրենքներից մի քանիսը իրենց մեջ չեն պարունակում Համաձայնագրի որոշ դրույթներ, որոնք եականորեն չեն ազդում ՀՀ պարտավորությունների վրա:

ԲԱԺԻՆ 2

ՄԱԳՅ-ի VI և XIX ՀՈՂՎԱԾՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ



2.1. ՀՀ ՀԱԿԱԳՆԱԳՑՄԱՆ (ՀԱԿԱԴԵՄՓԻՆԳԱՅԻՆ) ԵՎ ՓՈԽՅԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

ՄԱԳՀ նույն հիմնարար սկզբունքների վրա է հիմնված նաև Համաձայնագրի 6-րդ հոդվածի իրականացման մասին համաձայնագիրը, որը հայտնի է նաև որպես Հակազնագցման համաձայնագիր: Նշված համաձայնագրի և ՀՀ «Հակազնագցման (հակադեմֆինգային) և փոխհատուցման միջոցների մասին» օրենքի միջև կատարված համեմատությունը ցույց է տալիս, որ.

ՀՀ օրենքը, բացի հակազնագցման մասին դրույթների առնչվում է նաև փոխհատուցման (հակալրավճարային) միջոցների օգտագործմանը:

ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետում նշվում է, որ եթե արտահանող երկրի ներքին շուկայում սովորական առևտրային գործառույթների շրջանակներում բացակայում է ուսումնասիրվող ապրանքի վաճառքը, կամ եթե հնարավոր չէ պատշաճ համեմատություն կատարել արտահանող երկրի ներքին շուկայում այդ ապրանքի վաճառքի փոքր ծավալների կամ շուկայում իշխող առանձնահատուկ հանգամանքների պատճառով, ապա լիազոր մարմինն ապրանքի սովորական արժեքը կարող է որոշել նաև՝ հիմք ընդունելով ծագման երկրում ապրանքի արտադրության և իրացման ծախսերը՝ գումարած սովորաբար ստացվող շահույթը: Իսկ ՄԱԳՀ 2-րդ հոդվածի 2.2 կետը սահմանում է, որ այդ ծախսերը պետք է ներառեն իրենց մեջ արտադրության՝ դրան գումարած վարչական, իրացման և ընդհանուր ծախսերը և շահույթի խելամիտ արժեքները: Այսպիսով՝ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.2 կետը ավելի հստակ է պարզաբանում ծախսերի հաշվարկման եղանակը:

Օրենքի 14-րդ հոդվածի 4 -րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը շահագրգիռ կողմերի համար հատկորոշում է այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են անաչառ համեմատության համար: Իսկ ՄԱԳՀ 2-րդ հոդվածի 2.4 կետը նաև ավելացնում է, որ փաստարկների չհիմնավորված ծանրություն կողմերի վրա այդ ժամանակ չի դրվում, ինչը առավել շատ է նպաստում ավելի ճշգրիտ որոշման ընդունմանը:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսության ճյուղ հասկացությունը սահմանվում է որպես ՀՀ տարածքում գործող այն արտադրողների ամբողջություն, որոնք արտադրում են ուսումնասիրվող ապրանքին նման ապրանք, կամ ՀՀ տարածքում գործող արտադրողներից նրանք, ովքեր համատեղ թողարկում են ՀՀ-ում նման ապրանքների ամբողջ արտադրության կեսից ավելին: Դրան համարժեք՝ ՄԱԳՀ 4-րդ հոդվածի 4.1-ի կետի համաձայն՝ «Ներքին արդյունաբերական ճյուղ» հասկացությունը վերաբերում է ներքին նման արտադրանք արտադրողների ամբողջությանը կամ այդ արտադրողներից նրանց, որոնք համատեղ թողարկում են այդ արտադրանքի համախառն ներքին արտադրության հիմնական մասը»: ՀՀ օրենքում տված սահմանումը, մեր կարծիքով, թույլ է տալիս խուսափել հակասական մեկնաբանություններից և կանխել անցանկալի վեճերը:

ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված են խնդրո առարկայի վերաբերյալ ուսումնասիրություն սկսելու հիմքերը, որոնք են՝

- տնտեսության ճյուղի անունից լիազոր մարմին ներկայացված դիմումը;
- տնտեսության ճյուղի անունից օրենքով սահմանված կարգով հանդես եկող անձի՝ լիազոր մարմին ներկայացված դիմումը;
- լիազոր մարմնի նախաձեռնությունը:

ՄԱԳՀ 5-րդ հոդվածի 5.1 կետում նույնպես նշվում է, որ գնագցման առկայությունը, աստիճանն ու ազդեցությունը պարզելու նպատակով ուսումնասիրություն կարող է նախաձեռնվել ներքին արդյունաբերական ճյուղի կողմից կամ նրա անունից ներկայացված գրավոր դիմումի հիման վրա: Իսկ 5-րդ հոդվածի 5.6 կետում, ի տարբերություն ՀՀ օրենքի, արդեն լրացուցիչ նախատեսված է, որ իրավասու մարմինը միայն հատուկ դեպքերում որոշում է ուսումնասիրություն նախաձեռնել՝ առանց ներքին արդյունաբերական ճյուղի կողմից դիմում ստանալու, եթե ունի ուսումնասիրություն նախաձեռնելու հիմնավորող բավարար ապացույցներ՝ գնագցման, վնասի և պատճառահետևանքային կապի վերաբերյալ:

ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը սահմանում է. «Ուսումնասիրության տևողությունը չի կարող գերազանցել 6 ամիսը: Բավարար հիմքերի առկայության դեպքում լիազոր մարմինն այս ժամկետը կարող է երկարաձգել ևս մինչև 6 ամիս»: Նույն կերպ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 5.10 կետը նախատեսում է.

«Ուսումնասիրությունները, բացառությամբ հատուկ հանգամանքների, եզրափակվում են դրանց նախաձեռնումից հետո մեկ տարվա և բոլոր դեպքերում ոչ ավելի, քան 18 ամսվա ընթացքում»:

ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ կետում նշվում է, որ հարցաթերթերին պատասխանելու համար արտահանողներին տրվում է առնվազն 37 օր ժամանակ՝ սկսած պատասխանող կողմին հարցաթերթի առաքման օրվանից կամ արտահանող երկրի դիվանագիտական կամ պաշտոնական ներկայացուցչին դրա փոխանցման օրվանից: Իսկ Համաձայնագրի 6-րդ հոդվածի 6.1.1 կետում գրված է, որ հարցաթերթեր ստացած արտահանողներին կամ օտարերկրյա արտադրողներին պատասխանելու առնվազն 30 օր է տրվում:

Եվ վերջապես, ՄԱԳՀ 6-րդ հոդվածի 6.13-րդ կետը կարևոր դրույթ է պարունակում, որը բացակայում է ՀՀ օրենքում: Այն պարտավորում է Համաձայնագրի անդամների իրավասու մարմիններին պատշաճորեն հաշվի առնել այն դժվարությունները, որ կարող են ունենալ շահագրգիռ կողմերը, հատկապես փոքր ընկերությունները՝ պահանջված տեղեկությունները տրամադրելիս, և հնարավոր աջակցություն ցուցաբերել նրանց:

Այսպիսով կարելի է ասել, որ օրենքն իհարկե հիմնականում համընկնում է ՄԱԳՀ դրույթների հետ, սակայն կրկին անգամ մենք այստեղ բախվում ենք մի քանի տեխնիկական թերացումների հետ, ինչպիսիք են օրինակ հարցաթերթիկին պատասխանելու համար նախատեսված օրերի քանակը կամ օրինակ իրավասու մարմինների կողմից փոքր ընկերությունների շահերը հաշվի առնելու և ընդունված որոշումներում դրանք արտացոլելու պարտավորությունը:

2.2. ՀՀ ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Վերոհիշյալ նույն սկզբունքների վրա է խարսխված նաև «Պաշտպանական միջոցների մասին» համաձայնագիրը, որը հանդիսանում է ՄԱԳՀ-ի 19-րդ հոդվածի մանրամասնեցված լրացումը:

Ազգային օրենսդրության մեջ դրա համարժեքն է հանդիսանում «Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 2001 թվականի ապրիլի 18-ին և վերաբերում է ՀՀ տարածք ապրանքների ներմուծման նկատմամբ ներքին շուկայի պաշտպանության միջոցառումների կիրառման հետ կապված հարաբերություններին:

Համաձայնագրի 2-րդ հոդվածը, շարադրելով պաշտպանական միջոցների կիրառման պայմանները, նշում է. «Անդամը կարող է արտադրանքի նկատմամբ պաշտպանական միջոց կիրառել միայն այն դեպքում, երբ այդ Անդամը ներքոշարադրյալ դրույթների համաձայն որոշում է, որ այդ արտադրանքն իր տարածք է ներմուծվում այնպիսի աճող ծավալներով՝ բացարձակ կամ ներքին արտադրության նկատմամբ հարաբերական առումով, և այնպիսի պայմաններով, որ լուրջ վնաս է հասցնում ներքին արդյունաբերական ճյուղին, որն արտադրում է նման կամ ուղղակիորեն մրցակից արտադրանքներ, կամ ստեղծում է լուրջ վնասի վտանգ»:

Իր հերթին «Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի 2-րդ կետում ասվում է. «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների նկատմամբ ներքին շուկայի պաշտպանության միջոցառումներ կիրառվում են միայն այն դեպքում, երբ սույն օրենքով սահմանված կարգով իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ ուսումնասիրվող ապրանքը Հայաստանի Հանրապետության տարածք է ներմուծվում այնպիսի աճող ծավալներով (բացարձակ կամ տնտեսության ճյուղի արտադրության ծավալների նկատմամբ հարաբերական առումով) և պայմաններով, որոնք լուրջ վնաս են հասցնում տնտեսության ճյուղին կամ լուրջ վնասի վտանգ են ստեղծում»: Այս հոդվածն ըստ էության վերարտադրում է Համաձայնագրի համապատասխան դրույթը:

Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետում ասվում է. «... Այդ ուսումնասիրությունն իր մեջ ընդգրկում է բոլոր շահագրգիռ կողմերին արված հրապարակային պատշաճ ծանուցումը և հրապարակային քննարկումներ կամ այլ համապատասխան միջոցառումներ, որտեղ ներմուծողները, արտահանողները և այլ շահագրգիռ կողմերը կարող են իրենց տեսակետներն ու ապացույցները ներկայացնել, ներառյալ հնարավորություն՝ պատասխանելու այլ կողմերի ներկայացրած նյութերին և ներկայացնելու իրենց տեսակետները՝ մասնավորապես այն մասին, թե արդյոք պաշտպանական միջոցի կիրառումը հասարակական շահերից է բխում, թե ոչ: Իրավասու մարմինը զեկուցագիր է հրապարակում, որում նշվում են գործին առնչվող բոլոր փաստերի և իրավական հարցերի վերաբերյալ արված իր եզրահանգումներն ու հիմնավորված եզրակացությունները»:

Դրան համապատասխան՝ օրենքի հոդված 8-ի 1-ին կետով. «Լիազոր մարմինն ուսումնասիրություն սկսելու մասին ծանուցում է հրապարակում զանգվածային լրատվության միջոցներում»: Իսկ հոդված 5-ի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում ասվում է, որ «Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված տեղեկությունների ամբողջական չլինելու դեպքում ուսումնասիրություն կարող է սկսվել, եթե Լիազոր մարմին ներկայացված և նրա տրամադրության տակ եղած տվյալները բավարար են ուսումնասիրություն իրականացնելու և համապատասխան եզրակացության հանգեցնելու համար:

Ուսումնասիրությունը սկսելու համար բավարար հիմքերի առկայությունն ստուգելու նպատակով Լիազոր մարմինը քննության է առնում իր տրամադրության տակ եղած և ներկայացված փաստերի ճշտությունը և կարող է դիմողից լրացուցիչ տեղեկություններ պահանջել՝ գրավոր դիմումը ստանալուց հետո, 10 օրվա ընթացքում: Լիազոր մարմնի կողմից լրացուցիչ տեղեկությունների պահանջի ներկայացման դեպքում դիմողը պետք է դրա ստացման օրվանից հետո՝ 10 օրվա ընթացքում, Լիազոր մարմին տրամադրի պահանջվող տեղեկությունները: Գրավոր դիմումը կարող է հետ վերցվել մինչև ուսումնասիրության սկսվելը: Այդ դեպքում դիմումը համարվում է չներկայացված»:

Համաձայնագրի 4-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետի համաձայն «Ուսումնասիրության ընթացքում, որով որոշվում է, թե արդյոք աճող ներմուծումները սույն Համաձայնագրի դրույթների համաձայն լուրջ վնաս են հասցրել ներքին արդյունաբերական ճյուղին կամ ստեղծում են լուրջ վնասի վտանգ, իրավասու մարմինը քննության է առնում այդ արդյունաբերական ճյուղի վիճակին առնչվող բոլոր համապատասխան անաչառ ու քանակավորելի գործոնները, մասնավորապես՝ տվյալ արտադրանքի ներմուծումների աճի գործակիցն ու մեծությունը՝ բացարձակ ու հարաբերական առումով, ներքին շուկայի այն բաժինը, որը գրավել է աճող ներմուծումներով, վաճառքի ծավալի, արտադրության, արտադրողականության, կարողությունների շահագործման, շահույթների ու կորուստների և զբաղվածության փոփոխությունները»:

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանելով ՄԱԳՅ պահանջներին սահմանում է, որ «Լիազոր մարմինն ուսումնասիրության արդյունքում եզրակացություն է տալիս լուրջ վնասի կամ լուրջ վնասի վտանգի մասին, որն ընդգրկում է նաև լուրջ վնասի կամ լուրջ վնասի վտանգի և ուսումնասիրվող ապրանքի աճող ծավալներով և տվյալ պայմաններով ներմուծման միջև պատճառահետևանքային կապի հիմնավորումները: Լիազոր մարմնի եզրակացությունը պետք է հիմնված լինի գործին առնչվող ու տնտեսության ճյուղում ստեղծված վիճակի պատճառ հանդիսացող գործոնների վրա...»:

Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետով. «Անդամը պաշտպանական միջոցները կիրառում է միայն այն չափով, որքանով անհրաժեշտ է լուրջ վնասը կանխելու կամ հատուցելու և կարգավորմանը նպաստելու համար: Եթե քանակական սահմանափակում է օգտագործվում, ապա այդ միջոցով ներմուծումների քանակը չի իջեցվում վերջին ժամանակահատվածի մակարդակից, ինչը ներմուծումների միջինն է վերջին երեք հատկանշական տարիների ընթացքում, որոնց համար առկա են վիճակագրական տվյալներ, քանի դեռ հստակ հիմնավորում չի տրվել, որ լուրջ վնասի կանխման կամ հատուցման համար մեկ այլ մակարդակ է անհրաժեշտ: Անդամները պետք է ընտրեն միջոցներ, որոնք ամենից հարմար են այս նպատակներին հասնելու համար»:

Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով սահմանված է.«Եթե սույն օրենքով սահմանված կարգով իրականացված ուսումնասիրությունների արդյունքում Լիազոր մարմինը եզրակացնում է, որ ուսումնասիրվող ապրանքը Հայաստանի Հանրապետության տարածք է ներմուծվում այնպիսի աճող ծավալներով և պայմաններով, որի հետևանքով լուրջ վնաս է հասցվում տնտեսության ճյուղին կամ ստեղծվում է լուրջ վնասի վտանգ, ապա Լիազոր մարմինը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկություն է ներկայացնում՝ պաշտպանական միջոցառման կիրառման վերաբերյալ:

Քանակական սահմանափակումների և սակագնային քվոտաների կիրառման դեպքում «ներմուծում՝ ազատ շրջանառություն համարել մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքի բացթողումը, որը կարող է իրականացվել միայն ներմուծման թույլտվությունների առկայության դեպքում: Ներմուծման թույլտվությունների կամ ներմուծման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Այս դրույթները նույնպես միմյանց չեն հակասում, սակայն թե Համաձայնագրում և, թե քննարկման առարկա ՀՀ օրենքում մինչև վերջ չեն հստակեցվում իրականացման մեխանիզմները:

Համաձայնագրի 6-րդ հոդվածով. «Ծայրահեղ դեպքերում, երբ հապաղումը վնաս կհասցնի, որը դժվար կլինի վերականգնել, Անդամը կարող է ժամանակավոր միջոց ձեռնարկել նախնական եզրակացության համաձայն, ըստ որի՝ առկա են հստակ ապացույցներ, որ աճող ներմուծումները լուրջ վնաս են հասցրել կամ ստեղծում են լուրջ վնասի վտանգ: Ժամանակավոր միջոցի տևողությունը չի գերազանցում 200 օրը, որի ընթացքում պահպանվում են 2-7-րդ Հոդվածների և 12-րդ Հոդվածի համապատասխան դրույթները: Այդպիսի միջոցները պետք է կիրառվեն մաքսադրույթների բարձրացման ձևով, որոնք շտապ կարգով հետ են վճարվում, եթե 4-րդ Հոդվածի 2-րդ կետում հիշատակված հետագա ուսումնասիրությամբ չի պարզվում, որ աճող ներմուծումները լուրջ վնաս են հասցրել ներքին արդյունաբերական ճյուղին կամ ստեղծել են լուրջ վնասի վտանգ: Ցանկացած այդպիսի ժամանակավոր միջոցի տևողությունը հաշվվում է որպես 7-րդ Հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում հիշատակված սկզբնական ժամկետի և ցանկացած երկարացման մաս»:

Օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «1.Ներքին շուկայի ժամանակավոր պաշտպանական միջոցառումները կիրառվում են ծայրահեղ դեպքերում, երբ առկա են ակնհայտ փաստեր, որոնք վկայում են, որ ուսումնասիրվող ապրանքի աճող ծավալներով ներմուծումը լուրջ վնաս է հասցրել տնտեսության ճյուղին կամ ստեղծել է լուրջ վնասի վտանգ, ինչի կանխման կամ շտկման համար պահանջվում է հրատապ միջամտություն....

2. Ժամանակավոր պաշտպանական միջոցառումները կիրառվում են գործող մաքսատուրքի դրույթաչափի բարձրացման ձևով (անկախ ապրանքի ներմուծման համար գործող մաքսատուրքի դրույթաչափից): Ժամանակավոր պաշտպանական միջոցառումների կիրառման տևողությունը չի կարող գերազանցել 180 օրը....

7. Եթե հետագա ուսումնասիրությունների արդյունքում լիազոր մարմինը եզրակացնում է, որ Հայաստանի Հանրապետության տարածք ուսումնասիրվող ապրանքի աճող ծավալներով ներմուծումը լուրջ վնաս չի հասցնում տնտեսության ճյուղին կամ լուրջ վնասի վտանգ չի ստեղծում, ապա ժամանակավոր միջոցառումների կիրառման ընթացքում մաքսատուրքի ավելի վճարված գումարները վերադարձվում են վճարողներին՝ այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումից հետո՝ երեք ամսվա ընթացքում»:

Այստեղ կարելի է ասել, որ ՀՀ օրենսդրությունը նույնիսկ ավելի սեղմ ժամկետ է սահմանել ժամանակավոր միջոցների պահպանման համար, որն արտացոլում է այն դիմամիկան, որը հաղորդվել էր ԱՀԿ պահանջների կատարման հետ կապված փոփոխությունները: Բացի այդ, Համաձայնագրում ասվում

Ե նշված պաշտպանական միջոցների կիրառման ընթացքում վճարված մաքսատուրքից ավել վճարված գումարների վերադարձման շտապ կարգի մասին: Մինչդեռ օրենքով սահմանված Ե ՀՀ Կառավարության որոշումից հետո եռամսյա ժամկետ:

Մի կողմից իհարկե կարելի է ենթադրել, որ վերլուծվող ՀՀ օրենքում ավելի պարզ և միանշանակ է սահմանվել հավելյալ մաքսատուրքի վերադարձի ժամկետը, սակայն քանի որ Համաձայնագրում առկա «շտապ կարգով» եզրը մինչև վերջ պարզաբանված չէ, սա կարող է թյուրըմբռնման և երկակի ստանդարտների կիրառման ռիսկի հանգեցնել:

Համաձայնագրի հոդված 7-ի համաձայն.

1. Անդամը ժամանակավոր միջոցներ է կիրառում միայն այնքան ժամանակ, որքան կարող է անհրաժեշտ լինել լուրջ վնասի կանխման կամ հատուցման և կարգավորմանը նպաստելու համար: Այդ ժամանակահատվածը չի գերազանցում չորս տարին, եթե այն չի երկարացվել 2-րդ կետի համաձայն:
2. 1-ին կետում նշված ժամկետը կարող է երկարացվել, եթե ներմուծող Անդամի իրավասու մարմինը 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ Հոդվածներով սահմանված ընթացակարգերի համաձայն եզրակացնում է, որ լուրջ վնասի կանխման կամ հատուցման համար պաշտպանական միջոցը շարունակում է անհրաժեշտ լինել, և որ կան ապացույցներ, որ արդյունաբերական ճյուղը կարգավորվում է, և եթե պահպանվում են 8-րդ և 12-րդ Հոդվածների համապատասխան դրույթները:
3. Պաշտպանական միջոցի կիրառման ընդհանուր ժամանակահատվածը, ներառյալ՝ ցանկացած ժամանակավոր միջոցի կիրառման ժամանակահատվածը, սկզբնական կիրառման ու դրա ցանկացած երկարացման ժամանակահատվածը, չի գերազանցում ութ տարին:
4. Այն դեպքերում, երբ 12-րդ Հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն ծանուցված պաշտպանական միջոցի ակնկալվող տևողությունը մեկ տարվանից ավելի է, միջոցը կիրառող Անդամը՝ կարգավորմանը նպաստելու համար, կիրառման ժամանակահատվածի ընթացքում կանոնավոր պարբերությամբ, աստիճանաբար ազատականացնում է այն: Եթե միջոցի տևողությունը գերազանցում է երեք տարին, ապա այդ միջոցը կիրառող Անդամը իրավիճակը վերաքննում է ոչ ուշ, քան միջոցի տևողության կեսի լրանալը և անհրաժեշտության դեպքում վերացնում է այն կամ մեծացնում է ազատականացման ընթացքը: 2-րդ կետի համաձայն երկարացված միջոցն ավելի խիստ չէ, քան էր սկզբնական ժամանակահատվածի վերջում և շարունակում է ազատականացվել»:

Օրենքի հոդված 20-ի համաձայն.

1. Սկզբնական պաշտպանական միջոցառման տևողությունը, ներառյալ՝ ժամանակավոր միջոցառման տևողությունը, չպետք է գերազանցի չորս տարին:
2. Նշված ժամկետը կարող է երկարացվել, եթե Լիազոր մարմնի կողմից սույն օրենքով սահմանված կարգով իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ լուրջ վնասը կանխելու կամ շտկելու համար անհրաժեշտ է շարունակել պաշտպանական միջոցառման կիրառումը և փաստեր կան, որ դրանց կիրառման արդյունքում նկատելի է տնտեսության ճյուղի իրավիճակի բարելավում....

4. Պաշտպանական միջոցառման ընդհանուր տևողությունը (ներառյալ՝ ժամանակավոր միջոցառման տևողությունը և սկզբնական ու երկարացված միջոցառումների տևողությունները) չպետք է գերազանցեն ութ տարին....
6. Եթե պաշտպանական միջոցառման տևողությունն անցնում է մեկ տարվանից, ապա դրա կիրառման ողջ ժամանակահատվածում, ինչպես նաև միջոցառման երկարացման ժամկետի ընթացքում այդ միջոցառման կիրառման պայմանները պարբերաբար պետք է ազատականացվեն»:

Համաձայնագրի 7-րդ հոդվածի համաձայն «5. Այն արտադրանքի ներմուծման նկատմամբ, որը ենթակա է եղել ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ձեռնարկված պաշտպանական միջոցի, կրկին անգամ այդպիսի միջոց չի կարող կիրառվել այնքան ժամանակ, որը հավասար է այն ժամանակահատվածին, որի ընթացքում նախկինում այդպիսի միջոց է կիրառվել, եթե չկիրառման ժամանակահատվածը առնվազն երկու տարի է:

6. Անկախ 5-րդ կետի դրույթներից, արտադրանքի ներմուծման նկատմամբ կրկին կարող է կիրառվել 180 օր կամ դրանից պակաս տևողությամբ պաշտպանական միջոց, եթե՝

- ա) այդ արտադրանքի ներմուծման նկատմամբ պաշտպանական միջոց մտցնելու օրվանից անցել է առնվազն մեկ տարի, և՝
- բ) այդ նույն արտադրանքի նկատմամբ երկուսից ավելի անգամ այդպիսի միջոց չի կիրառվել՝ միջոցը մտցնելու օրվան անմիջապես նախորդող հնգամյա ժամանակահատվածում»:

Իսկ օրենքի 22-րդ հոդվածով.

1. Տվյալ ապրանքի ներմուծման նկատմամբ պաշտպանական միջոցառման կիրառումից հետո կրկին անգամ նման միջոցառում կարող է կիրառվել միայն կիրառված պաշտպանական միջոցառման ավարտից առնվազն երկու տարի հետո:
2. Անկախ սույն հոդվածի 1-ին կետի դրույթից, եթե կիրառված պաշտպանության միջոցառման տևողությունը չի գերազանցում 180 օրը, ապա տվյալ ապրանքի ներմուծման նկատմամբ կարող է կրկին անգամ կիրառվել մինչև 180 օր տևողությամբ պաշտպանական միջոցառում, եթե՝
 - ա) տվյալ ապրանքի ներմուծման նկատմամբ կիրառված պաշտպանական միջոցառման սկզբից անցել է առնվազն մեկ տարի, և
 - բ) տվյալ ապրանքի ներմուծման նկատմամբ կրկնակի միջոցառման կիրառման օրվան նախորդող հինգ տարվա ժամանակահատվածում երկուսից ավելի անգամ պաշտպանական միջոցառում չի կիրառվել»:


Նմանօրինակ կերպով տեսանելի է, որ Համաձայնագրի հոդվածը պարզապես ուղղակիորեն վերարտադրվել է ՀՀ օրենսդրության մեջ և այս պարագայում ևս ոչ մի հակասություն չի ենթադրվում:

Քննարկելով այս օրենքի համապատասխանությունը ԱՀԿ «Պաշտպանական միջոցների մասին» համաձայնագրի հետ՝ կարելի է փաստել, որ այն բացառությամբ չնչին տեխնիկական թերության բախումներ չի առաջացնում:

ԲԱԺԻՆ 3

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԼԽԱՎՈՐ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ.

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ ԵՎ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ԱՌԴԴՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԲԱՆԿԵՐԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ՏՈՒՐԻԶՄԻ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԵՏ



3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅ- ՆԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ (ԾԱԳՀ)

Բանակցությունների Ուրուգվայի փուլի հիմնական արդյունքներից մեկն է հանդիսանում «Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագիրը» (ԾԱԳՀ): ԾԱԳՀ ստեղծեց ծառայությունների շուկայի մատչելիության վրա ազդող քաղաքականությունների կանոնները՝ մեծապես ընդլայնելով բազմակողմանի առևտրի համակարգի ծածկույթը:

Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագիրը բաղկացած է չորս հիմնական տարրերից.

- 1) ընդհանուր հայեցակարգերի, սկզբունքների և կանոնների փաթեթից, որը կիրառվում է բոլոր այն միջոցների վրա, որոնք ազդում են ծառայությունների առևտրին,
- 2) ազգային մոտեցման սկզբունքին և շուկայի մատչելիությանը վերաբերող հատուկ պարտավորություններից, որոնք առնչվում են հատուկ ոլորտային կամ միջոլորտային որակավորումների կամ պայմանների (եթե այդպիսիք կան) առարկա հանդիսացող ծառայությունների այն ոլորտներին կամ ենթաոլորտներին, որոնք թվարկված են Անդամ պետության ժամանակացույցում,
- 3) այն գիտակցումից, որ կանոնավոր բանակցություններ կարող են ձեռնարկվել, որոնք առաջադեմ կերպով կարող են ազատականացնել ծառայությունների առևտուրը
- 4) ոլորտային յուրահատկություններից ու ԾԱԳՀ իրականացմանը վերաբերող նախարարական որոշումներին կից փաստաթղթերի համախմբից:

ԾԱԳՀ-ն կիրառվում է Համաձայնագրի անդամ հանդիսացող երկրների կողմից կիրառված միջոցների նկատմամբ, որոնք իրենց ազդեցությունն են ունենում այլ Անդամ երկրներից ծագող ծառայությունների սպառման վրա (Հոդված 1):

Այս Համաձայնագիրը կիրառվում է «մատուցման բոլոր չորս տեսակների» նկատմամբ.

- 1) ծառայությունների անդրսահմանային մատուցում (օրինակ այն ծառայությունները, որոնք չեն պահանջում մատակարարողի կամ սպառողի ֆիզիկական շարժը);
- 2) դրույթներ, որոնք ներառում են սպառողի՝ մատակարարողի երկիր մուտքը;
- 3) ծառայություններ, որոնք վաճառվում են Անդամի տարածքում իրավաբանական անձանց կողմից, որոնք սակայն ծագել են այլ Անդամի տարածքում
- 4) ֆիզիկական անձանց ժամանակավոր տեղաշարժ պահանջող ծառայությունների տրամադրում: Համաձայնագիրը չի կիրառվում կառավարական գործառույթների իրականացվող ծառայությունների նկատմամբ:

ԾԱԳՅ-ում պարունակվող պարտավորությունները կարելի է դասակարգել երկու լայն խմբի՝ ընդհանուր պարտավորություններ, որոնք ուղղակիորեն և ավտոմատ կերպով կիրառվում են բոլոր անդամների և ծառայությունների ոլորտի նկատմամբ, ինչպես նաև պարտավորություններ, որոնք վերաբերում են շուկայի մատչելիությանը և հատուկ որոշված ոլորտներում ազգային մոտեցմանը: Նման պարտավորությունները ամրագրված են երկրների հատուկ պարտավորությունների ժամանակացանկերում, որոնց շրջանակները կարող են զգալիորեն տարբերվել: Համապատասխան եզրերն ու հայեցակարգերը նման են. այսպես օրինակ Ազգերի առավել բարենպաստության և ազգային մոտեցումը ՄԱԳՅ ընդհանուր պարտավորություն է առևտրում ու արդեն չի բանակցվել ԾԱԳՅ շրջանակներում:

ՄԱԳՅ-ի հիմնական սկզբունքը խտրականության չկիրառումն է, որը արտացոլվել է նրա Ազգերի առավել բարենպաստության և ազգային մոտեցման սկզբունքներում, որոնք էլ կիրառվում են բոլոր առևտրային հոսքերի համար: Այս երկու սկզբունքները նաև ԾԱԳՅ առանցքային տարրերն են, սակայն վերջինիս շրջանակներում նրանց ընդգրկումը այնքան էլ համապարփակ չէ: ԱՄԲ սկզբունքը ԾԱԳՅ յուրաքանչյուր Անդամ պետության համար բացասական ցուցակի առարկա է, այն կիրառվում է բոլոր ծառայությունների համար, բացառությամբ նրանց, որոնք թվարկվել են յուրաքանչյուր անդամի կողմից: Ազգային մոտեցման ծածկույթը կանխորոշվում է «պայմանական» «դրական» ցուցակի մոտեցմամբ. այսինքն այն կիրառվում է միայն պետության ցուցակում նշված ոլորտների նկատմամբ և միայն այն չափով որքանով, որ գոյություն ունեցող միջոցները չեն բացառվում:

ԾԱԳՅ II հոդվածի համաձայն, անդամները պարտավորվում են այլ անդամի ծառայության կամ ծառայություններ տրամադրողի նկատմամբ միանգամից ու առանց նախապայմանների կիրառել «ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, քան ցանկացած այլ երկրի նման ծառայությունների կամ ծառայություններ տրամադրողի նկատմամբ» (**Ազգերի առավել բարենպաստության մոտեցում**): Սա, սկզբունքորեն հավասարազոր է անհատական ոլորտներում պետությունների խմբի ներսում նախապատվային համաձայնագրերի կնքման վրա արգելքին կամ դրույթների փոխադարձությանը սահմանող մատչելիության նպաստավորությունը՝ առևտրային գործընկերների համար միօրինակ վերաբերմունքի սահմանմամբ: Մասնակի բացառությունները հնարավոր են այսպես կոչված հոդված II-ի Բացառությունների տեսքով: Անդամներին թույլատրվում է նման բացառություններ սահմանել մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը: Գործող անդամի պարագայում, նոր բացառությունները կարող են տրամադրվել միայն նոր անդամներին անդամակցության գործընթացի ժամանակ՝ ԱՀԿ Պայմանագրի հոդված 9-ի կետ 3-ով սահմանված զիջումների տեսքով: Բոլոր նման բացառությունները վերանայման առարկա են հանդիսանում և պետք է տևեն ոչ ավելի, քան տաս տարի: Հետագայում ԾԱԳՅ-ն թույլատրում է Անդամ պետություններին տնտեսական միասնականացման պայմանագրեր կնքել կամ փոխադարձաբար ճանաչել կանոնակարգող չափանիշները, սերտիֆիկատները և այն հավանականությունը, որ որոշ պայմաններն արդեն բավարարված են:

Այլնի թվում նաև ԾԱԳՅ Անդամ պետությունները պարտավոր են հրապարակել ընդհանուր կիրարկման բոլոր միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ստեղծել ազգային հարցման կետեր, որոնք իրավասու կլինեն արձագանքելու այլ անդամների տեղեկատվական բնույթի խնդրանքներին (**Թափանցիկություն**):

Ընդհանուր այլ պարտավորությունների թվին կարելի է դասել վարչական վերանայման ու բողոքարկման ընթացակարգերի, ինչպես նաև մենաշնորհների և այլ բացառիկ մատակարարողների գործունեության դիսցիպլինների ստեղծումը:

ԾԱԳՅ կորիզը իրականում կազմում են հատուկ պարտավորությունները: Ծատ առումներով Համաձայնագրի ազդեցությունը կախված է Անդամ պետությունների կողմից ստանձնած հատուկ պարտավորություններից: Համաձայնագիրը վերլուծող գիտական գրականության մեջ ընդունված է այսպես կոչված «դրական» և «բացասական» ցուցակների «հիբրիդի» մոտեցումը: Ցուցակը դրական է այն առումով, որ որոշում է շուկայի մատչելիության և ազգային մոտեցման պարտավորությունների ոլորտային ծածկույթը և բացասական է այն առումով, որ պահպանում է կամ ազգային մոտեցման կամ շուկայի մատչելիության սկզբունքները խախտող միջոցները:

Այսպիսով, ինչպես պարզ է դառնում վերը նշվածից, շուկայի մատչելիությունը և ազգային մոտեցումը կազմում են Համաձայնագրի հատուկ պարտավորությունները: Այս պարտավորությունները կիրառվում են միայն Անդամ պետությունների ցուցակներում ներգրավված ծառայությունների նկատմամբ:

Շուկայի մատչելիության սահմանափակման վեց ձև է սկզբունքորեն արգելված՝ սահմանափակումներ.

- 1) ծառայություններ մատուցողների թույլատրելի քանակի,
- 2) գործարքների կամ ակտիվների արժեքի,
- 3) ծառայության արդյունքի ընդհանուր քանակի,
- 4) աշխատանքի վերցված ֆիզիկական անձանց քանակը,
- 5) իրավաբանական անձի տեսակը, որի միջոցով ծառայություններ մատուցողին թույլատրվում է գործունեություն ծավալել (օրինակ մասնաճյուղերն ի հակադրում բանկային գործունեության համար սուբսիդիարների)
- 6) օտարերկրյա կապիտալի մասնակցությունը օտարերկրյա փայատիրության առավելագույն ծավալի կամ օտարերկրյա ներդրման բացարձակ արժեքի սահմանման նկատմամբ:

Խոսելով ԾԱԳՅ և ՀՀ որոշ օրենքների համապատասխանության մասին՝ պետք է նախևառաջ ընդգծել, որ Համաձայնագրի հոդված II-ի բացառությունները սահմանող հատուկ պարտավորությունների ցուցակում ընդգրկված են գրեթե բոլոր այն ոլորտները, որոնք կարգավորվում են ուսումնասիրության առարկա հանդիսացող ոլորտներով: Հատկանշական է այն հանգամանքը, որ հիմնականում բոլոր չորս չափանիշները, որով գնահատվում է ծառայությունների ոլորտի ազատականությունը ոչ մի սահմանափակում չի նախատեսում աուդիտի և հաշվապահական հաշվառման բնագավառներում:

3.1. ՀՀ ՀԱՇՎԱՊԱՅՎԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Այսպես, 2002թ. հունվարի 26-ին ընդունված և 2003թ. հունվարի 31-ին ուժի մեջ մտած «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվություններ կազմելու և ներկայացնելու հիմունքները:

Համաձայնագրի 3 bis հոդվածը սահմանում է, որ համաձայնագիրը ոչ մի Անդամից չի պահանջում գաղտնի տեղեկություններ տրամադրել, որոնց բացահայտումը կխափաներ օրենքների կիրարկումը կամ կհակասեր հասարակական շահերին կամ կվնասեր պետական կամ մասնավոր ընկերությունների օրինական առևտրային շահերը: Իսկ ֆինանսական ծառայությունների վերաբերյալ հավելվածի 2-րդ կետի (բ) ենթակետը նախատեսում է, որ Անդամից չի պահանջվում անհատ հաճախորդների գործերին և հաշիվներին վերաբերող տեղեկություններ կամ պետական կազմակերպությունների տրամադրության տակ եղած որևէ գաղտնի կամ մասնավոր տեղեկություն բացահայտել: Դրան համապատասխան օրենքի 18-րդ հոդվածը նախատեսում է հաշվապահական տեղեկատվության գաղտնիության սկզբունքը: Ստացվում է, որ այս առումով, այս 2 դրույթները իրենց բովանդակությամբ համապատասխանում են միմյանց:

ԾԱԳՀ-ն ունի ֆինանսական ծառայություններին նվիրված առանձին հավելված, որը սակայն, վերաբերում է ճանաչմանը, վեճերի կարգավորմանը և ֆինանսական ծառայությունների շարքը համալրող գործունեությունների շրջանակի սահմանմանը: Մինչդեռ օրենքում իրենց արտացոլումն են ստացել այնպիսի հարցեր, ինչպիսիք են հաշվապահական հաշվառումը, ֆինանսական հաշվետվությունները և դրանց տարրերը, վերջիններս կազմելու սկզբունքները, հաշվառման վարման հիմնական կանոնները և այլ բազմաթիվ տեխնիկական հարցեր, որոնց վերաբերյալ համաձայնագրում հիշատակումներ չկան: Կարելի է եզրակացնել, որ օրենքի և համաձայնագրի միջև կապն այնքան էլ սերտ չէ: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հատուկ պարտավորությունների ցանկում CPC 862 կոդավորման տակ անցնող հաշվապահական հաշվառում գործունեությունը չի ենթարկվում ոչ մի բացառության, ապա կարելի է պնդել, որ իրավական տեսանկյունից օրենքի և նրա ծածկույթի՝ ԾԱԳՀ հետ համապատասխան լինելու հարցը կասկածներ չի հարուցում:

3.2. ՀՀ ԱՌԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Նույնը կարելի է ասել 2002թ. դեկտեմբերի 26-ին ընդունված և 2003թ. հունվարի 31-ին ուժի մեջ մտած «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի մասին, ուր շարադրված է, թե ինչ է իրենից ներկայացնում աուդիտորական գործունեությունը և աուդիտը, ինչպես նաև աուդիտին հարակից ծառայությունները, բավականին մանրամասն կարգավորված է աուդիտորական գործունեության իրականացման ընթացակարգը, դրա արդյունքում ընդունվող փաստաթղթերը, այդ գործունեությանը մասնակցող անձանց (աուդիտ իրականացնող անձ և աուդիտի ենթարկվող անձ) իրավունքներն ու պարտականությունները, աուդիտորների որակավորման պահանջները, աուդիտորական գործունեության լիցենզավորումը և պատասխանատվությունը օրենքի պահանջների խախտման համար:

Օրենքից բխում է, որ աուդիտ իրականացնող անձը պարտավոր է ապահովել այդ գործունեության իրականացման ընթացքում ստացված փաստաթղթերի, ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության գաղտնիությունը՝ բացառությամբ օրենքով կամ պայ-

մանագրով նախատեսված դեպքերի: Դրան համապատասխան ԾԱԳՅ սահմանում է, որ Անդամից չի պահանջվում տրամադրել գաղտնի տեղեկություններ, որոնց բացահայտումը կվնասի պետական կամ մասնավոր ընկերությունների առևտրային օրինական շահերին:

Այս դեպքում ևս մենք բախվում ենք այն հանգամանքի հետ, որ այս ոլորտը ընդգրկվել է ՀՀ կողմից ընդունված հատուկ պարտավորությունների ցուցակում և ոչ անդրսահմանային մոտեցման, ոչ արտերկրում սպառման և ոչ էլ առևտրային ներկայության առումներով խնդրահարույց ոլորտ չէ: Իսկ ֆիզիկական անձանց շարժի առումով այս ոլորտը կարգավորվում է Պարտավորությունների մասին խոսող հավելվածի հորիզոնական բաժնում զետեղված բացառություններով, որոնք ըստ էության, համաձայնեցված են հենց ԾԱԳՅ և ՀՀ անդամակցության պայմանագրի դրույթներով:

3.3. ՀՀ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

1996թ. հունիսի 30-ին ընդունված և նույն օրն էլ ուժի մեջ մտած «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը սահմանում է ՀՀ տարածքում ստեղծվող և գործող բանկերի, նրանց և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների գրանցման, լիցենզավորման, գործունեության կարգավորման և դադարման, ինչպես նաև բանկային գործունեության հսկողության կարգը:

Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ տարածքում արգելվում է առանց Կենտրոնական բանկի կողմից տրված բանկային գործունեության լիցենզիայի բանկային գործունեության իրականացումը: Իր հերթին Համաձայնագրում նշված է, որ եթե թույլտվություն է պահանջվում որևէ ծառայություն մատուցելու համար, ապա իրավասու մարմինը (տվյալ դեպքում՝ Կենտրոնական բանկը) ներկայացված դիմումի վերաբերյալ կայացնում է որոշում:

Օրենքի 34-րդ հոդվածում թվարկված են այն գործառնությունները, որոնք կարող են իրականացնել բանկերը, այն է՝

- ա) ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ.
- բ) տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.
- գ) տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ).
- դ) բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ.
- ե) մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.
- զ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, նման այլ գործառնություններ կատարել.
- է) ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն իրականացնել.
- ը) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում).
- թ) գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ.

- ժ) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.
- ժա) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).
- ժբ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարտեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.
- ժգ) մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն.
- ժդ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի ետ ստացման գործունեություն.
- ժե) իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ:

Համաձայնագրի Ֆինանսական ծառայությունների մասին հավելվածի 5-րդ կետում սահմանվում են դրամատնային և այլ ֆինանսական գործառնություններ: Համեմատելով Օրենքի և ԾԱԳՀ այդ ցանկերը՝ ակնհայտ է, որ դրանք համընկնում են:

3.4. ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2002թ. մայիսի 29-ին և ուժի մեջ է մտել 2002թ. հունիսի 22-ին: Այս օրենքը կարգավորում է վարկային կազմակերպությունների գործունեությունը, պետական գրանցման ու լիցենզավորման հետ կապված հարցերը, ֆինանսական գործունեությունը, վարկային կազմակերպության և հաճախորդների հետ փոխհարաբերությունները, վարկային կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողությունը, պատասխանատվությունը օրենսդրության խախտումների համար և մի շարք այլ կարևոր հարցեր:

ԾԱԳՀ 3-րդ հոդվածում բացահայտված է համաձայնագրի հիմքում ընկած սկզբունքներից մեկի՝ թափանցիկության բովանդակությունը, ըստ որի յուրաքանչյուր Անդամ պարտավոր է հրապարակել ընդհանուր կիրառության բոլոր համապատասխան միջոցները, իսկ եթե այդ հրապարակումն անիրագործելի է, ապա այդ տեղեկությունը հանրության համար մատչելի է դարձվում որևէ այլ ձևով: Սրան համապատասխանում է օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ կետը, ըստ որի վարկային կազմակերպությունը ցանկացած անձի պահանջով պարտավոր է նրան հնարավորություն ընձեռել՝ ծանոթանալու նույն հոդվածով նախատեսված տեղեկատվությանը:

ԾԱԳՀ ֆինանսական ծառայությունների մասին հավելվածում թվարկված են ծառայությունների այն տեսակները, որոնք դասվում են ֆինանսական ծառայությունների թվին, այդ թվում՝ հասարակությունից ավանդների և ետ վճարման ենթակա այլ միջոցների ընդունումը, բոլոր տեսակի փոխատվությունները, ֆինանսական վարձակալումը, երաշխիքները և պարտավորությունները, վճարումների և դրամական փոխանցումների բոլոր ծառայությունները և այլն: Դրան համապատասխան՝ օրենքի 8-րդ հոդվածը թվարկում է այն ֆինանսական գործառնությունները, որոնք կարող է իրականացնել վարկային կազմակերպությունը: Եթե համեմատենք այդ 2 դրույթները, կհամոզվենք, որ ըստ էության, դրանք լիովին ներդաշնակ են:

ԾԱԳՀ համաձայնագրի և օրենքի բովանդակությունից բխում է, որ վարկային կազմակերպությունը պետք է գործի լիցենզիայի հիման վրա, հետևաբար նրանք համահունչ են:

3.5. ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Ինչ վերաբերում է «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքին, ապա այն կարգավորում է տրանսպորտի կառավարման համակարգը և առնչվում է տրանսպորտային գործունեության հիմնադրույթներին, փոխադրման անվտանգությանը, սահմանում է կողմերի փոխադարձ պատասխանատվությունը՝ պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում: Օրենքում կարգավորվում են այնպիսի հարցեր, որոնք ավելի նեղ բնույթ ունեն և վերաբերում են ավելի մասնավոր հարցերի:

Համաձայնագրի 6-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է. «Եթե թույլտվություն է պահանջվում որևէ ծառայություն մատուցելու համար, որի վերաբերյալ հատուկ պարտավորություն է ստանձնված, ապա Անդամի իրավասու մարմինը ներքին օրենքների և կանոնակարգերի համաձայն լիարժեք համարվող դիմումը ներկայացվելուց հետո՝ պատշաճ ժամանակահատվածի ընթացքում դիմողին տեղեկացնում է դիմումի վերաբերյալ կայացված որոշման մասին»: Իսկ 4-րդ կետը շարունակում է. «Նպատակ ունենալով ապահովել, որ որակավորման պահանջներին և ընթացակարգերին, տեխնիկական համօրինակներին և լիցենզավորման պահանջներին վերաբերող միջոցներն ավելորդ խոչընդոտներ չեն առաջացնում ծառայությունների առևտրի համար, Ծառայությունների առևտրի խորհուրդը՝ համապատասխան մարմինների միջոցով, որոնք ինքը կարող է ստեղծել, մշակում է ցանկացած անհրաժեշտ հիմնադրույթներ, որոնց նպատակն է երաշխավորել, որ այդ պահանջները, մասնավորապես,

- ա) հիմնված լինեն այնպիսի անաչառ ու թափանցիկ չափանիշների վրա, ինչպիսիք են իրազեկությունն ու ծառայություն մատուցելու կարողությունը.
- բ) ավելի բարդ չլինեն, քան անհրաժեշտ է ծառայության որակը երաշխավորելու համար.
- գ) լիցենզավորման ընթացակարգերի դեպքում, ինքնին սահմանափակում չլինեն՝ ծառայությունների մատուցման համար»:

«Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը իր հերթին սահմանում է, որ տրանսպորտային գործունեության առանձին տեսակներ, որոնց ցանկը սահմանվում է օրենքով, իրականացվում են լիցենզիայի հիման վրա, և այդ գործունեության հետ կապված վերահսկողությունն իրականացնում է տրանսպորտային համակարգի պետական լիազորված մարմինը:

Համադրելով ԾԱԳՀ և օրենքի այս դրույթները՝ պարզ է դառնում, որ տրանսպորտային գործունեության առանձին տեսակներ ենթակա են լիցենզավորման, այսինքն՝ իրենցից ներկայացնում են լիցենզավորված գործունեություն: Դրա նկատմամբ վերահսկողություն է իրականացնում այդ ոլորտի պետական լիազորված մարմինը: Ըստ համաձայնագրի՝ այդ վերահսկողությունը ենթադրում է համապատասխան մարմնի կողմից որոշակի հիմնադրույթների մշակում՝ որոշակի խնդիրներից խուսափելու համար: Մինչդեռ օրենքից չի երևում, թե ինչ եղանակներով և նպատակներով է լիազորված մարմինը վերահսկողություն իրականացնում այդ գործունեության նկատմամբ:

ԾԱԳՀ անբաժան մասը հանդիսացող Օդային փոխադրման ծառայությունների մասին հավելվածի 6-րդ կետի (դ) ենթակետում բացատրվում է, թե ինչ է նշանակում «երթևեկության իրավունքներ»՝ ցուցակագրված և չցուցակագրված ծառայությունների համար Անդամի տարածքից, դեպի Անդամի տարածք, Անդամի տարածքում կամ տարածքի վրայով ուղևորների, փոխադրաբեռների և փոստա-

ռաբունների հետ գործողություններ կատարելու և, կամ դրանք փոխադրելու իրավունքը՝ վարձատրության կամ վարձութավճարի դիմաց, ներառյալ՝ սպասարկվող կետերը, շահագործվող ուղիները, փոխադրվող փոխադրաբեռների տեսակները, ապահովվող կարողությունները, գանձվող սակագրերն ու դրանց պայմանները և օդային գծերի հատկորոշման չափանիշները, ներառյալ այնպիսի չափանիշները, ինչպիսիք են համարը, պատկանելիությունը և վերահսկողությունը:

Դրան համապատասխան՝ «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ուղևորների, բեռների, ուղեբեռների, փոստի փոխադրման համար գանձվում է պայմանագրով սահմանված վարձ, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ: Իսկ 17-րդ հոդվածը սահմանում է, որ տրանսպորտային միջոցը վարելու իրավունք ունեն այն անձինք, ովքեր ունեն անհրաժեշտ որակավորում, անցել են բժշկական քննություն և ունեն սահմանված նմուշի հաստատված փաստաթուղթ: Որակավորման պահանջները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, իսկ անձնակազմի առողջական վիճակի գնահատման չափանիշները սահմանվում են առողջապահության համակարգի պետական լիազորված մարմնի սահմանած կարգով:

Այստեղ, կրկին անգամ մենք բախվում ենք այն փաստի հետ, որ ԾԱԳՀ այս կամ այն դրույթի կիրառելիության հարցերը անհստակ են մնում ու հստակ սահմանված կերպով չեն կանոնակարգվում: Իհարկե սա Համաձայնագրի դրույթունների խախտում չէ, սակայն նման զարգացումը տեղ է թողնում համընտրական մեկնաբանությունների համար, եթե իհարկե հավանական թյուրըմբռնումը արդեն իսկ նման մանրակրկիտ մեկնաբանություն պահանջի:

3.6. ՀՀ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

2007թ. նոյեմբերի 28-ին ընդունված և 2007թ. դեկտեմբերի 25-ին ուժի մեջ մտած «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է երկաթուղային տրանսպորտի գործունեության հիմունքները, սկզբունքները, այդ գործունեության լիցենզավորումը, ենթակառուցվածքի հետ կապված բազմաթիվ հարցեր, երկաթուղային տրանսպորտի կազմակերպություններին և օբյեկտներին ներկայացվող հիմնական պահանջները, անվտանգությունը և այլն:

Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ երկաթուղային տրանսպորտի բնագավառում գործունեության կազմակերպման լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Իսկ ԾԱԳՀ-ն սահմանում է, որ եթե որևէ ծառայություն մատուցելու համար թույլատվություն է պահանջվում, ապա իրավասու մարմինը ներկայացված դիմումի վերաբերյալ կայացնում է որոշում: Դա նշանակում է, որ երկաթուղային տրանսպորտի գործունեությունը ենթակա է լիցենզավորման:

Սրանով ԾԱԳՀ և օրենքի կապը սպառվում է, քանի որ օրենքում կարգավորվում են խիստ նեղ բնույթի հարցեր, որոնց մասին համաձայնագրում հիշատակված չէ:

3.7. ՀՀ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի, որն ընդունվել է 24.11.2004թ. և ուժի մեջ է մտել 21.12.2004թ., կարգավորման առարկան առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի հետ կապված հարաբերություններն են: Օրենքում մանրամասն շարադրված են առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների օբյեկտներին և առևտրի իրականացման վայրերին ներկայացվող պահանջները, առևտրի կազմակերպման կանոնները, ինչպես նաև անդրադարձ է կատարված այդ ոլորտում հսկողության իրականացման կարգին և պատասխանատվությանը: Փաստորեն օրենքը շատ մասնավոր հարցեր է կարգավորում, իսկ օրենքն ու համաձայնագիրը սկզբունքային և բովանդակային հարցերում միմյանց հետ չեն առնչվում, իսկ այս օրենքն իր ծածկույթով և հիփոթեզով դուրս է ընկնում սույն գլխի սկզբում նշված և ԾԱԳՀ ծածկույթի տակ գտնվող ոլորտներից:

3.8. ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

2003թ. դեկտեմբերի 17-ին ընդունված և 2004թ. հունվարի 14-ին ուժի մեջ մտած «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան են հանդիսանում հասարակական հարաբերությունների մի խումբ, որոնք ի հայտ են գալիս քաղաքացիների հանգրստի, շրջագայության, ազատ տեղաշարժման իրավունքների իրականացման գործընթացում: Օրենքում խոսվում է զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության, ծառայությունների կազմակերպման և տրամադրման, զբոսաշրջիկների անվտանգության, իրավունքների և պարտականությունների մասին:

Վերոնշյալ օրենքի և ԾԱԳՀ միջև ընդհանրությունը սահմանափակվում է միայն լիցենզավորման մասին դրույթներով:


Այսպես, ԾԱԳՀ 6-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանվում է, որ եթե թույլտվություն է պահանջվում որևէ ծառայություն մատուցելու համար, ապա Անդամի իրավասու մարմինը դիմումի վերաբերյալ կայացնում է որոշում: Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ զբոսավարների և ուղեկցորդների գործունեությունը լիցենզավորվում է: Լիցենզիա է ստանում ՀՀ կառավարության սահմանած կարգով որակավորում ստացած անձը: Մնացած մասով համաձայնագիրն ու օրենքը չեն առնչվում:

Այստեղ ևս մենք առերեսում ենք այն հանգամանքը, որ քննության առարկա վերցված Բաժին 3-ում օրենքները իրենց բովանդակային մասով չեն առնչվում կամ էլ չեն հակասում ԾԱԳՀ համաձայնագրին, բայց միևնույն ժամանակ հիշատակման է արժանի այն փաստը, որ հիմնարար սկզբունքների իրականացումը կամ պահպանումը արվում է լռելյայն, այն է այս կամ այն սկզբունքը պահպանելու պահանջը ամրագրված է միայն միջազգային նորմի սահմանադրական գերակայության հայեցակարգով:

ԲԱԺԻՆ 4

ԱՌԵՎՏՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ.

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ
ՈԼՈՐՏԸ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՈՒ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԵՏ:



4. ԱՌԵՎՏՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ (ԱՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ)

ԱՏԻՆ համաձայնագրի կանոնները կիրառվում են

- տեխնիկական կանոնակարգերի
- ստանդարտների
- համապատասխանության գնահատման ընթացակարգերի նկատմամբ

Ավնհայտ է, որ այդ Համաձայնագիրը կիրառվում է «միջոցների սահմանափակ դասակարգի նկատմամբ»: Միջոցառումների այս երեք տեսակները սահմանված են ԱՏԻՆ համաձայնագրի Հավելված 1-ում, ուր *տեխնիկական կանոնակարգը* սահմանվել է որպես «փաստաթուղթ, որը սահմանում է ապրանքի բնութագրերը կամ դրանց հետ կապված գործընթացները և արտադրության մեթոդները, ներառյալ կիրառելի վարչական դրույթները, որոնցում համապատասխանությունը պարտադիր է: Այն կարող է նաև ներառել կամ գործ ունենալ բացառապես տերմինաբանության, պայմանանշանների, փաթեթավորման, մակնշման կամ պիտակավորման պահանջների հետ այնքանով, որքանով որ նրանք կիրառվում են ապրանքի գործընթացին կամ արտադրության մեթոդին»: Հավելված 1.2-ում *ստանդարտը* բնորոշվում է որպես «Լիազորված մարմնի կողմից հաստատված փաստաթուղթ, որը սահմանում են ընդհանուր և բազմակի օգտագործման համար նախատեսված կանոններ, ուղեցույցեր կամ բնութագրեր ապրանքների, հարակից գործընթացների կամ արտադրության մեթոդների վերաբերյալ, ուր ըստ որում, համապատասխանությունը պարտադիր չի հանդիսանում: Այն կարող է նաև ներառել կամ գործ ունենալ բացառապես տերմինաբանության, պայմանանշանների, փաթեթավորման, մակնշման կամ պիտակավորման պահանջներ այնքանով, որքանով որ նրանք կիրառվում են ապրանքի գործընթացին կամ արտադրության մեթոդին»: Ի վերջո համապատասխանության գնահատման ընթացակարգերը նույնպես ընկնում են ԱՏԻՆ համաձայնագրի կիրառման ծածկույթի ներքո, և նրանց բնորոշումը տրվում է Հավելված 1.3-ում որպես ուղղակի կամ անուղղակի կերպով կիրառվող ցանկացած ընթացակարգ, որը որոշում է, որ տեխնիկական կանոնակարգման կամ ստանդարտի համապատասխան պահանջը բավարարվել է:

Այս երեք ոլորտներն իրենց հերթին ծածկում են թե արտադրական և թե գյուղատնտեսական ապրանքներն ու գործընթացներն ու արտադրության մեթոդները:

ԱՏԻՆ համաձայնագրի հիմնական բովանդակային դրույթներն իրենց մեջ նույն դրույթներն են պարունակում, որոնք առկա են նաև 1994թ. ՄԱԳՀ դրանք են Ազգերի առավել բարենպաստության մոտեցում ցույց տալու, ազգային մոտեցում ցուցաբերելու և միջազգային առևտրին անհիմն խոչընդոտներ ստեղծելուց ձեռնպահ մնալու պարտավորությունները:

ԱՏԻՆ համաձայնագրի 2.1 հոդվածը ամրագրում է, որ տեխնիկական կանոնակարգումների առումով «Անդամ պետությունները պետք է երաշխավորվեն, որ տեխնիկական կանոնակարգերի մասով ցանկացած անդամի տարածքից ներկրված ապրանքներին պետք է ոչ պակաս բարենպաստ վերաբեր-

մունք տրամադրվի, որքան և տեղական ծագում ունեցողներին, ինչպես նաև այլ երկրի ծագում ունեցողներին»: Պետք է նաև նշել, որ ԱՏԽ համաձայնագրի 3 Հավելվածի Դ կետի և 5.1.1 հոդվածի համաձայն այս Նույն պարտավորությունները տարածվում են նաև համապատասխանաբար ստանդարտների և համապատասխանության գնահատման ընթացակարգերի վրա:

Իհարկե այստեղ ծագում է տարբեր ապրանքների իրար նման լինելու հարցը, որը սակայն հստակ սահմանում չի ստացել ԱՅԿ վեճերի կարգավորման մարմնի կամ այլ՝ նմանօրինակ հարցերով զբաղվող դատարանների որոշումներում: Իսկ ինչ վերաբերում է բացառությունների խնդրին, որը հստակորեն ամրագրված է ՄԱԳՀ, ապա այս հարցը ևս չի քննարկվել ԱՏԽ համաձայնագրի շրջանակներում:

Ստանդարտների և համապատասխանության գնահատման կտրվածքով Հավելված 3-ի Ե կետը և 5.1.2 հոդվածը Նույնպիսի պարտավորություններ է սահմանում, ինչպես նաև ԱԱԲ մասով:

Երաշխավորելու համար, որ տեխնիկական կանոնակարգերը առևտրի համար անհարկի խոչընդոտներ չեն պարունակում՝ ԱՏԽ համաձայնագրի Հոդված 2.2-ը այնուհետև սահմանում է, որ տեխնիկական կանոնակարգումները չպետք է ավելի սահմանափակող լինեն առևտուրը, քան դա անհրաժեշտ է իրավագործ նպատակների հասնելու համար՝ հաշվի առնելով այն ռիսկերը, որոնք կարող են ծագել նման պահանջները չբավարարելուց: Նույն հոդվածը թվարկում է նաև մի շարք իրավագործ նպատակներ, որոնք կարող են արդարացնել առևտրային խոչընդոտների ստեղծումը: Այս ցուցակը ներառում է ազգային անվտանգություն, շփոթեցնող գործելակերպի կանխում, մարդկանց առողջության և անվտանգության պահպանումը, կենդանիների կամ բույսերի կյանքի և առողջության պահպանումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը: Սա իհարկե իրավագործ քաղաքական նպատակների սպառնիչ ցանկը չէ և Վճռաբեկ Մարմնի հայեցողությանն է թողնված որոշելու, թե արդյոք թվարկվածներից բացի մասնավոր դեպքերում առկա են օրինական քաղաքականության նպատակներ: 2.2 հոդվածով ներկայումս «արդարացված» կանոնակարգումը որպես այդպիսին չի հարատևում ապագայում: Հենց հաջորդ 2.3 հոդվածը նշում է, որ կանոնակարգերը չեն պահպանվում այն բանից հետո, երբ դրանց ընդունմանը հանգեցնող հանգամանքները կամ նպատակները այլևս գոյություն չունեն կամ եթե փոխված հանգամանքները կամ նպատակները կարելի է կարգավորել առևտուրը պակաս սահմանափակող եղանակով: Մինևույն ժամանակ պետք է ասել, որ դեռևս չի գրանցվել նմանատիպ անհրաժեշտության գնահատմանն ուղղված և ոչ մի նախադեպ:

Միջազգային ստանդարտների շուրջ ազգային տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների համապատասխանեցումը վերացնում է առևտրի տեխնիկական խոչընդոտների սահմանափակող ազդեցությունը՝ նվազագույնի հասցնելով ներմուծման տարբեր շուկաներում արտահանողների կողմից բավարարման ենթակա պահանջների քանակը: Այս նկատառումներից ելնելով ԱՏԽ համաձայնագիրը իր անդամներից պահանջում է իրենց տեխնիկական կանոնակարգերը կառուցել միջազգային ստանդարտների հիման վրա (Հոդված 2.4): Մինևույն ժամանակ նման միջազգային ստանդարտները կամ դրանց համապատասխան մասերը ոչ արդյունավետ կամ անհամապատասխան միջոցներ կդառնան օրինական նպատակների իրականացման համար, օրինակ հիմնարար բնակլիմայական գործոնների կամ տեխնոլոգիական խնդիրների պատճառով:

Բացի հիմնական բովանդակային դրույթներից, ԱՏԽ համաձայնագիրը պարունակում է նաև մի շարք այլ՝ հիշատակման արժանի սկզբունքներ. այն է համարժեքություն ու փոխադարձ ճանաչում, կատարողականի առումով ապրանքին ներկայացվող պահանջներ և թափանցիկություն ու իրազեկում:

Այսպես, ԱՏԽ համաձայնագիրը պահանջում է, որ ԱՅԿ անդամները որպես համարժեք ընդունեն այլ անդամների տեխնիկական կանոնակարգերը: Իհարկե նրանք այս քայլին կարող են դիմել այն պարագայում, եթե նրանք բավարարված են ու օտարերկրյա տեխնիկական կանոնակարգերը համօրինակ կերպով են բավարարում տեղական տեխնիկական կանոնակարգերի կողմից հետապնդվող օրինական նպատակները (Յոդված 2.7): Ինչ վերաբերում է համապատասխանության գնահատման ընթացակարգերին, ապա ԱՏԽ համաձայնագրով նախատեսված է, որ անդամները պետք է ընդունեն այլ անդամների կողմից իրականացված ընթացակարգերի արդյունքները, եթե նրանք հավաստիացնում են, որ վերջիններս համապատասխանում են տեղական տեխնիկական կանոնակարգերին և ստանդարտներին, նույնիսկ եթե դրանք տարբերվում են իրենց իրականացման եղանակով:

Խոսելով նշված հաջորդ սկզբունքի մասին պետք է ասել, որ ԱՏԽ համաձայնագիրն այստեղ նույնպես տվյալ հարցերի լուծումը թողնում է Անդամ պետությունների հայեցողությանը. այն է, երբ նպատակահարմար է, անդամները մանրամասնում են իրենց տեխնիկական կանոնակարգերը՝ ելնելով ապրանքին ներկայացվող պահանջներից, դրա կատարողականի և ոչ թե արտաքին տեսքի կամ նկարագրողական հատկանիշների հիման վրա: Նույնը 3 | Հավելվածով նախատեսվում է ստանդարտների համար:

Երբ համապատասխան միջազգային ստանդարտ գոյություն չունի կամ, երբ առաջարկվող տեխնիկական կանոնակարգը չի համապատասխանում տվյալ միջազգային ստանդարտին ու առաջարկվող տեխնիկական կանոնակարգը այլ անդամների առևտրի վրա կարող է նշանակալից ազդեցություն ունենալ, ԱՏԽ համաձայնագրի 2.9 հոդվածը անդամներից պահանջում է՝

- այն բանի մասին, որ իրենք առաջարկում են առանձին տեխնիկական կանոնակարգ մտցնել, ծանուցում են հրապարակում համապատասխան վաղ փուլում այնպես, որ այլ Անդամ երկրների շահագրգիռ կողմերին հնարավորություն տրվի ծանոթանալու դրա հետ:
- Զարտուղարության միջոցով այլ Անդամներին ծանուցում են առաջարկված տեխնիկական կանոնակարգով ընդգրկված արտադրանքների մասին՝ ամփոփ կերպով մատնանշելով դրա նպատակն ու հիմնավորումը: Այդպիսի ծանուցումները կատարվում են համապատասխան վաղ փուլում, երբ դեռ կարելի է ուղղումներ մտցնել և մեկնաբանություններ հաշվի առնել:
- պահանջի դեպքում այլ Անդամներին տրամադրում են առաջարկված տեխնիկական կանոնակարգի տվյալները կամ պատճենները և, երբ հնարավոր է, մատնանշում են այն մասերը, որոնք էականորեն տարբերվում են համապատասխան միջազգային համօրինակներից:
- առանց խտրականության, այլ Անդամներին պատշաճ ժամանակ են տրամադրում գրավոր դիտողություններ անելու համար, պահանջի դեպքում քննարկում են այդ դիտողությունները և հաշվի են առնում այդ գրավոր դիտողություններն ու այդ քննարկումների արդյունքները:

Նման միջոցներով Համաձայնագիրը փորձում է ապահովել տեղեկատվական հոսքերի հասանելիությունը բոլորին: Նմանօրինակ դրույթներ են պարունակվում նաև ստանդարտների և համապատասխանության գնահատման պահանջների վերաբերյալ: Որպես լրացուցիչ պահանջ ստանդարտների համար ԱՏԽ համաձայնագիրը ազգային ստանդարտացման մարմիններին պարտավորեցնում է առնվազն կես տարին մեկ հրապարակել իրենց աշխատանքային ծրագիրը և զեկուցել ստանդարտների նախապատրաստման և ընդունման մասին:

4.1. ՀՀ ՀԱՄԱՊԱՏԱՍԻՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐ

Համեմատելով ԱՏԻ համաձայնագիրը ՀՀ «Համապատասխանության գնահատման մասին» և «Ստանդարտացման մասին» օրենքների հետ՝ պետք է նշել, որ Համաձայնագրի 1 հոդվածի 1.5 կետում նշված է, որ այն չի գործում Սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման նկատմամբ:

ՀՀ «Համապատասխանության գնահատման մասին» օրենքի 7-րդ հոդվածն էլ սահմանում է, որ համապատասխանության գնահատման նպատակները ներառում են նաև կենդանիների և բույսերի կյանքի ու առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանության ապահովումը՝ ձեռնարկատիրական և արտադրական գործունեության վնասակար ազդեցությունից: 7-րդ հոդվածի համապատասխանության գնահատման նպատակների ցանկից հարկ է նշել նաև մի քանիսը, որոնք նպաստում են ԱՀԿ համաձայնագրի ՀՀ - ում կիրառմանը:

Դրանք են՝

- ներքին և արտաքին շուկաներում արտադրանքի տեխնիկական խոչընդոտների վերացումը, ինչպես նաև միջազգային տնտեսական, գիտատեխնիկական համագործակցության և միջազգային առևտրում մասնակցելու համար բարենպաստ պայմանների ստեղծումը;
- սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների գործունեության արդյունքների միջազգային փոխճանաչման համար պայմանների ստեղծումը;
- համապատասխանության գնահատման ընթացակարգերի ներդաշնակումը միջազգային համապատասխանության գնահատման ընթացակարգերին, ինչպես նաև առևտրում տեխնիկական խոչընդոտների բացառումը:

Համաձայնագրում նախատեսված են Անդամների լրացուցիչ պարտականություններ, որոնք բացակայում են ՀՀ նշված օրենքներում և նույնպես պետք է ապահովվեն ՀՀ-ում:

Իհարկե մի կողմից կարելի է ասել, որ ԱՏԻ համաձայնագրում ամրագրված սկզբունքները կարելի է պահպանել «լռելայն», սակայն մյուս կողմից ավելի նպատակահարմար կլինի դրանք օրենսդրորեն ամրագրել, այլ անդամ-պետությունների նկատմամբ՝ մեր ստանձնած պարտավորություններն ավելի հստակեցնելու նկատառումներից ելնելով:

Ըստ ԱՏԻ համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.3 կետի՝ տեխնիկական կանոնակարգերը չեն պահպանվում, եթե դրանց ընդունմանը հանգեցնող հանգամանքները կամ նպատակներն այլևս գոյություն չունեն, կամ եթե փոխված հանգամանքները կամ նպատակները կարելի է կարգավորել առևտուրը պակաս սահմանափակող եղանակով: Նման դրույթը բացակայում է ՀՀ քննարկվող օրենքներում:

Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.12 կետը սահմանում է, որ բացառությամբ հրատապ հանգամանքների, Անդամները պատշաճ ժամանակահատված են թողնում տեխնիկական կանոնակարգի հրապարակման ու դրանց ուժի մեջ մտնելու միջև, որպեսզի արտահանող Անդամների և, հատկապես, զարգացող Անդամ երկրների արտադրողներին ժամանակ տան իրենց արտադրանքը կամ արտադրական եղանակները հարմարեցնելու ներմուծող Անդամների պահանջներին:


ՀՀ «Ստանդարտացման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 10-րդ կետը այս դեպքի համար նախատեսում է կոնկրետ ժամկետ՝ 6 ամիս, ինչը մեր կարծիքով, համապատասխանում է ԱՏԽ համաձայնագրի նշված դրույթին:

Փաստորեն, ԱՏԽ համաձայնագրում ամրագրված սկզբունքների տեսանկյունից ՀՀ օրենսդրական համակարգը ինքնին չի հակասում ԱՏԽ համաձայնագրին, սակայն ՀՀ-ում նախևառաջ առկա են այդ սկզբունքների ամրագրման և կիրառման հարցերը, իսկ մյուս կողմից Հայաստանը բացարձակապես չի պաշտպանում ԱՏԽ համաձայնագրի լրացուցիչ դրույթները, որոնք հիմնականում վերաբերում են տեղեկատվության հրապարակմանը և համապատասխան ընթացակարգերի պահպանմանը: Իհարկե մինչ այժմ նախադեպեր չեն արձանագրվել այս դրույթները չպահպանելու համար՝ պետություններին պատասխանատվության կանչելու մասով, սակայն ամեն պարագայում ԱՏԽ համաձայնագրի կատարումը մնում է անավարտ:

ԲԱԺԻՆ 5

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ.

ՇՐՋԱՆԱԿԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ
ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ,
ԲՈՒՅՍԵՐԻ, ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ՍԵՐՄԵՐԻ,
ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԵՏ



5. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ (ՍԲՍ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ)

«Սանիտարական և Բուսասանիտարական Միջոցների կիրառման մասին» համաձայնագրի շրջանակը բավականին նեղ է՝ առնվազն տեսականորեն, քանի որ այն կիրառվելի է միայն այն միջոցների համար, որոնք միտված են ԱՀԿ ներմուծող անդամի տարածքում մարդկանց, կենդանիների և բույսերի կյանքի պաշտպանությանը յուրահատուկ սանիտարական և բուսասանիտարական ռիսկերից: Դեռ ավելին՝ 1.1 հոդվածի համաձայն սանիտարական և բուսասանիտարական միջոցները հարկ է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգործեն միջազգային առևտրի վրա: Հետևաբար բացարձակապես ներքին՝ միջազգային չափումների վրա ազդեցություն չունեցող միջոցառումները դուրս են մտնում սույն համաձայնագրի ծածկույթից:

Համաձայնագրի յուրահատուկ ռիսկերը վերաբերում են.

- ա) վնասատուների տարածումից, հիվանդություններից, հիվանդակիր կամ հարուցիչ օրգանիզմների ծագումից կամ տարածումից կենդանիների կյանքի և առողջության համար ծագող ռիսկերին,
- բ) սննդամթերքում, խմիչքներում և անասնակերում պարունակվող հավելումներից, աղտոտիչներից, թունավոր նյութերից մարդկանց և կենդանիների կյանքի համար ծագող վտանգին,
- գ) կենդանիների, բույսերի կամ դրանցից ստացված արտադրանքում պարունակվող վարակներից կամ վնասատուների մուտքից, ծագումից կամ տարածումից մարդկային կյանքի և առողջության համար ծագող վտանգներին,
- դ) վնասատուների մուտքի, ծագման կամ տարածման հետ կապված այլ ռիսկերին¹:

Վերոշարադրյալ ցուցակը սպառնիչ է և, եթե որևէ ռիսկ չի համապատասխանում նշված դասակարգերից որևիցե մեկին, ապա նման դեպքերում ՍԲՍ համաձայնագիրը չի կիրառվում: Ի հավելումն պետք է ասել, որ Հավելված Ա (1) ներառում է նաև այնպիսի պահանջների և ընթացակարգերի ոչ սպառնիչ ցանկ, ինչպիսիք են վերջնական արտադրանքի չափանիշները, գործընթացների և արտադրության մեթոդները, փորձարկման, ստուգման, սերտիֆիկացիայի և հավաստման ընթացակարգերը, կարանտինի պայմանները, կենդանիների և բույսերի տեղափոխմանը առաջադրվող պահանջները, համապատասխան վիճակագրական մեթոդների սահմանումները, ռիսկերի գնահատման ընթացակարգերը և մեթոդները, փաթեթավորման և պիտակավորման այն պահանջները, որոնք ուղղակիորեն կապված են պարենային անվտանգության հետ:

Իր առջև դրված խնդիրներին հասնելու համար ՍԲՍ համաձայնագրում պարունակվում են մի շարք բովանդակային և ընթացակարգային դրույթներ: Բովանդակային դրույթները նպատակամղված են պաշտպանելու մարդկանց, կենդանիների և բույսերի առողջությունն ու կյանքը՝ միևնույն ժամանակ կանխարգելելով առևտրի համար առկա չարդարացված խոչընդոտները: Ընթացակարգային դրույթները ստեղծում են անդամ պետությունների մեջ շփման շրջանակը:

¹ Ըստ Համաձայնագրում թվարկված ռիսկերի՝ կենդանիներ եզրը նշանակում է ձկներին և վայրի ֆաունան, բույսերը՝ անտառները և վայրի ֆլորան, վնասատուներ՝ ներառում է մոլախոտերը, այն դեպքում երբ աղտոտիչների մեջ են մտնում պեստիցիդները, անասնաբուժական դեղամիջոցների մնացորդները, ինչպես նաև օտարածին տարրերը:

Համաձայնագիրն ինքնին հիմնված է հինգ հիմնական սկզբունքների վրա՝

1. *Ներդաշնակեցում* – խրախուսում է միջազգային չափանիշներին, ուղեցույցներին կամ միջազգային գործակալությունների առաջարկություններին համապատասխանելուն ուղղված միջոցառումները,
2. *Համարժեքություն* – միջազգային չափանիշներին հասնելուն ուղղված համաչափ միջոցների փոխադարձ ճանաչում:
3. *Խտրականության չկիրառում* – վերաբերվել ներմուծմանը նույն կերպ, ինչպես որ տեղական արտադրանքին:
4. *Թափանցիկություն* – իրազեկել առևտրային գործընկերներին սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների փոփոխման մասին, հատկապես, եթե միջոցառումները տարբերվում են միջազգային չափանիշներից:
5. *Գոտիավորում* – թույլատրել շարունակական արտահանումը վարակի զոհ դարձած երկրների մաքուր (վարակազերծ) տարածքներից:

Այս Համաձայնագիրը ևս վերահաստատում է երկրների՝ ներմուծվող վնասատուների դեմ պաշտպանության համապատասխան մակարդակն ընտրելու ազատությունը: Ինչևիցե, եթե միջոցը չի համապատասխանում միջազգային չափանիշներին, ներմուծող երկիրը պետք է գիտականորեն հիմնավորի, թե ինչու է անհրաժեշտ այս կամ այն միջոցը և, ինչպես են նրանք վերահսկում ռիսկը:

Բովանդակային հիմնական դրույթները գետեղված են Հոդվածներ 5-ում և 6-ում.

- Հոդված 5.1 անդամներից պահանջում է (երբ հնարավոր է և հավուր պատշաճի) հիմնել իրենց միջոցառումները համապատասխան միջազգային կազմակերպությունների ուղեցույցներով մշակած ռիսկերի գնահատման մեթոդաբանության վրա:
- Հոդված 5.2 սահմանում է, որ երկրները պետք է հաշվի առնեն ռիսկերի հետ կապված ուղղակի ծախսերը (օրինակ արտադրության կամ վաճառքի հնարավոր կորուստները, վերահիշկողության և արմատախիլ անելու ծախսերը) բույսերի և կենդանիների պաշտպանությանն ուղղված սանիտարական և բուսասանիտարական միջոցառման ընտրության դեպքում:
- Նույն կերպ հոդված 5.5-ը պարտադրում է յուրաքանչյուր անդամի խուսափել իր կողմից սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների համապատասխանությանը հասնելու համար ընտրված պաշտպանության մակարդակների համընտրային կամ չարդարացված լիսելուց:

Փաստորեն, բովանդակային առումով համաձայնագիրը պարտադրում է մի ճկուն շրջանակ, որի սահմանների ներքո անդամ-պետությունները կարող են ցանկացած գործունեություն ծավալել, որն ուղղված կլինի ՄԲՍ համաձայնագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը:

Ազգային օրենսդրության ներդաշնակեցումը Համաձայնագրի պայմաններին հիմնարար նշանակություն ունի, հատկապես այն մասով, որը վերաբերում է Համաճարակաբանության միջազգային գրասենյակի, Բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիայի և «Կողմնակալի և Կողմնակալի Կլիմենտարիում»-ի միջազգային չափանիշներին, երբ համապատասխան ազգային միջոցառումները մշակելիս հղում է կատարվում այս կամ այն նորմի հիմնավորմանը:

Կարևոր է նաև ազգային օրենսդրության մեջ ներգրավել սանիտարական և բուսասանիտարական պաշտպանության համապատասխան մակարդակի ռիսկերի գնահատման և սահմանման հայեցակարգերը, ինչպես նաև վնասատուներից կամ հիվանդություններից և գոտիների և վնասատուների կամ հիվանդությունների նվազ տարածվածությամբ գոտիների ճանաչումը, եթե պետությունները ցանկանում են լիովին համապատասխանել ՍԲՍ համաձայնագրին:

Ինչ վերաբերում է թափանցիկությանը, ապա կառավարությունները պետք է ընդունեն իրենց՝ կանոնակարգերի, հարցման կետերի և ծանուցման ընթացակարգերի վերաբերյալ համապատասխան օրենսդրական միջոցառումները, որոնք կհամապատասխանեն ՍՊՍ-ի համաձայնագրի դրույթներին: Այլ դեպքում, եթե չիրականացվի օրենքների, կանոնակարգերի, չափանիշների, ինչպես նաև հրապարակումների, տեղեկատվության, ծանուցման և ընթացակարգերի ներդաշնակեցումը, այնպես ինչպես սահմանված է ՍՊՍ-ի համաձայնագրում, կառավարությունները դուրս կընկնեն նմանատիպ գործընթացներ իրականացրած երկրների շարքից և արդյունքում մեկնաբանման բարդույթներ կծագեն միջազգային գյուղատնտեսական բանակցությունների ընթացքում:

Խոսելով ՀՀ կենդանական աշխարհի, բուսական աշխարհի, դեղերի, սերմերի մասին օրենքների վերաբերյալ՝ պետք է ասել, որ իրենց հիմնական գծերով այս օրենքները չեն հակասում ՍԲՍ համաձայնագրին, սակայն միևնույն ժամանակ առկա են մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում վերաբերում են նշված օրենքների ներդաշնակեցմանը՝ ՍԲՍ համաձայնագրի մի շարք դրույթների, ինչպես նաև նրանցից բխող պահանջների հետ:

5.1. ՀՀ ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

ՀՀ «Կենդանական աշխարհի մասին» օրենքը, որը փոխարինել է ՀԽՍՀ օրենքը, վերջինիս 3-րդ հոդվածը սահմանում է. «Սույն օրենքի նպատակն է

- ա) գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը.
- բ) կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը.
- գ) կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությունը
- դ) կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը.
- ե) կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը.
- զ) կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը»:

Իհարկե օրենքի 16-րդ հոդվածում հիշատակվում է կենդանական աշխարհի պաշտպանության սանիտարական և բուսասանիտարական միջոցների մասին, սակայն միևնույն ժամանակ Օրենքում չարդարված դրույթները պարզապես չեն առնչվում ՍԲՍ համաձայնագրի հետ:

5.2. ՀՀ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Նույնը կարելի է ասել ՀՀ Բուսական աշխարհի մասին օրենքի մասին, որը վերաբերում է բուսական աշխարհի պահպանությանը, պաշտպանությանը, օգտագործմանը, վերարտադրությանը և դրանց պետական կառավարմանը, բուսական աշխարհի ուսումնասիրություններին, բուսական աշխարհի օբյեկտների օգտագործմանը, օրենքի դրույթները չպահպանելու դեպքում վրա հասնող հետևանքներին:

Օրենքի 15-րդ և 18-րդ հոդվածներում հիշատակվում է բուսական աշխարհի օբյեկտները վնասատուներից և հիվանդություններից պաշտպանելու մասին և հանքային պարարտանյութերի ու թուղանաքիմիկատների չկանոնակարգված օգտագործումը, բայց այս օրենքի շրջանակը ևս պարզապես չի առնչվում համաձայնագրի հետ:

5.1 և 5.2 գլուխներում նշված օրենքներում հղում չի կատարվում նաև OIE և IPPC համօրինակների և ուղեցույցերի վրա, որոնք հիշատակված են ՄԲՍ համաձայնագրի Հավելված Ա-ում: Իսկ այս կազմակերպությունների ուղեցույցերին հետևելը ՄԲՍ համաձայնագրի պահանջ է հանդիսանում:

Պարզ է դառնում, որ ուսումնասիրության առարկա հանդիսացող օրենքը, իր բուն էությամբ, չի արտացոլում ՄԲՍ համաձայնագրում բույսերի մասով արծարծված վերոնշյալ դրույթները: Նույնը կարելի է ասել վտանգի գնահատման մասին ՄԲՍ համաձայնագրի Հոդված 5-ում գետնղված դրույթների վերաբերյալ, որոնք նույնպես ինկորպորացված են նշված օրենքներում:

Այսինքն, Կենդանական աշխարհի և Բուսական աշխարհի մասին օրենքները համապատասխանեցված չեն ՄԲՍ համաձայնագրին ապա պետք է իրականացնել օրենքների ներդաշնակեցումը Համաձայնագրի համապատասխան հոդվածների հետ: Այսպիսով կարելի է փաստել, որ այն պարագայում խնդրո առարկան նշված Կենդանական աշխարհի և Բուսական աշխարհի մասին օրենքների վերակառուցումն է՝ ըստ ՄԲՍ համաձայնագրի պահանջների, այն է կենդանիների և բույսերի պահպանման միջոցների հստակեցումը, որը կկոնկրետացնի օրենքների կիսառումը:

Այստեղ իհարկե պետք է նաև հիշատակել նշված օրենքների այն հոդվածները, որոնք վերաբերում են միջազգային պայմանագրերին և կարծես թե լուծում են առկա խնդիրը, սակայն իրավակիրառման տեսակետից այս դրույթները գտնվում են տարբեր շերտերում և նրանց ուղղակի արտացոլումը Կենդանական աշխարհի և Բուսական աշխարհի մասին օրենքներում կամ այլ օրենսդրական ակտում միանշանակորեն կհստակեցնի ՀՀ պարտավորությունները այս բնագավառում:

5.3. ՀՀ ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Ինչ վերաբերում է ՀՀ «Դեղերի մասին» օրենքին, ապա այն ընդունվել է 27.10.1998թ.-ին և ուժի մեջ է մտել 26.11.1998թ.: «Դեղերի մասին» օրենքը վերաբերում է դեղագործական գործունեության, դեղերի արտադրության կարգին և դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններին, դեղերի պետական գրանցման իրականացման կարգին և օրենքի դրույթները չպահպանելու դեպքում վրա հասնող հետևանքներին:

Օրենքի 1-ին հոդվածը սահմանում է. «Դեղեր են համարվում նաև՝ հականեխիչ միջոցները (անտիսեպտիկներ)՝ վարակիչ և մակաբուծային հիվանդությունների հարուցիչները, ինչպես նաև դրանց փոխանցողներին ոչնչացնող կամ վերացնող միջոցները...»: Համաձայնագրում հիշատակվող «սանիտարական և բուսասանիտարական միջոցների» ցանկում կարող ենք նշել նաև դեղերը՝ հիմնվելով օրենքի 1-ին հոդվածի վրա:

Օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է դեղերի պետական գրանցման կարգը. «Հայաստանի Հանրապետությունում թույլ է տրվում ներմուծել, արտադրել, պահպանել, բաշխել, իրացնել և կիրառել միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում սահմանված դեպքերի: Գրանցման ենթակա են՝

- բուժման նպատակով առաջարկվող նոր դեղանյութերը և դեղաձևերը

Դեղերի գրանցումը ճանաչվում է անվավեր, երբ հայտնաբերվում է առաջարկվող պահանջներին դրանց որակի, արտադրության և անվտանգության անհամապատասխանություն կամ, երբ փոփոխություններ են տեղի ունենում դրանց բաղադրության, ձևի, նշանակման և արտադրության պայմանների մեջ...»:

Սակայն օրենքի ընդհանուր բովանդակությունից և մասնավորապես՝ հոդված 15-ից բխում է, որ այդ ցանկում ընդգրկված դեղերը պարտադիր պետք է համապատասխանեն օրենքում նշված դրույթներին, ենթարկվեն պետական գրանցման, այլապես Հայաստանի Հանրապետության սահմաններում դրանց օգտագործումը չի թույլատրվի:

Մինևս այն ժամանակ հաշվի առնելով ՍԲՍ համաձայնագրի այն դրույթը, որ անդամ պետությունները որպես համարժեք են ընդունում այլ անդամ պետությունների սանիտարական և բուսասանիտարական միջոցները, եթե արտահանող Անդամը անաչառորեն ցույց է տալիս ներմուծող Անդամին, որ իր միջոցներն ապահովում են ներմուծող Անդամի սանիտարական և բուսասանիտարական պաշտպանության մակարդակը (հոդված 4), ապա ստացվում է, որ ՀՀ դեղերի մասին օրենքը սանիտարական և բուսասանիտարական միջոցների ներմուծման մասով որոշակիորեն խոչընդոտում է ՍԲՍ համաձայնագրի իրականացմանը: Օրենքում բովանդակված մնացած բոլոր դրույթները սկզբունքորեն չեն առնչվում ՍԲՍ համաձայնագրում պարունակվող սահմանումների, սակայն իրենց հիպոթետիկ չեն հակասում ԱՀԿ այս համաձայնագրին:

Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս մենք բախվում ենք ներդաշնակեցման խնդրի հետ, այսինքն ՀՀ օրենսդրությունը այս մասնավոր դեպքի համար այլ բան է նախատեսում, քան ՍԲՍ համաձայնագրով նախատեսված պայմանը՝ նույնիսկ չհիշատակելով համապատասխանության խնդրի մասին: Առկա է օրենսդրական բաց, որը հակասում է հենց իրեն օրենքին, որի 21-րդ հոդվածը նախատեսում է հենց միջազգային պայմանագրի գերակայությունը:

5.4. ՍԵՐՄԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

ՀՀ «Սերմերի մասին» օրենքը նույնպես հակասություններ չի պարունակում ՍԲՍ համաձայնագրի հետ և ըստ էության կարելի է ասել, որ ամենահամահունչն է, քանի որ օրենքում պարունակվող դրույթները լիովին համապատասխանում են Համաձայնագրի կողմից սահմանված շրջանակներին:


Ամեն պարագայում հատկանշական են ևս մի քանի փաստեր՝ այն է, որ բոլոր նշված օրենքներում հիշատակվում է այն փաստը, որ ազգային օրենսդրության հետ մեկտեղ գործում են նաև ՀՀ կողմից ընդունած միջազգային պայմանագրերը: Սակայն նման «պահածոյացված» վիճակում միջազգային պայմանագրերի ազդեցությունը ՀՀ օրենսդրական դաշտի վրա համարյա աննշան է, քանի որ տվյալ պարագայում ՍԲՍ համաձայնագրում պարունակվող դրույթները վտանգների գնահատման, անդամների միջև տեղեկատվության փոխանակման և բացահայտման, վնասատուներից և հիվանդություններից զերծ գոտիների սահմանման և ճանաչման մասին դուրս են մնում ՀՀ օրենսդրության շրջանակից:

Փաստորեն կարելի է ասել, որ բովանդակային առումով քննարկված օրենքները լուրջ տարածայնություններ չունեն ՍԲՍ համաձայնագրի հետ, սակայն ընթացակարգային (տեխնիկական) մակարդակի վրա առկա են բացթողումներ, որոնց լրացումը միայն կհեշտացնի հետագա աշխատանքներն ու համագործակցությունը:

ԲԱԺԻՆ 6

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԿՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ.

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ
ԼԻՑԵՆԶԿՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՀԵՏ



6. ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ (ՆԼԸ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ)

ՄԱԳՅ 1994-ի մասն է կազմում նաև «Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին» համաձայնագիրը, որի 8-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր Անդամ պետությունն ապահովում է իր օրենքների, կանոնակարգերի և վարչական ընթացակարգերի համապատասխանությունը սույն Համաձայնագրի դրույթներին ոչ ուշ, քան իր համար ԱՀԿ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

Համաձայնագրի մասին առավել ընդգրկուն պատկերացում ստանալու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև նրա սկզբունքներին: Վերջիններին շարքում առանձնակի դեր են խաղում հետևյալները.

- լիցենզավորման թափանցիկ ու կանխատեսելի եղանակը,
- ոչ բարդ վարչարարությունը, ըստ որի՝ Անդամ պետությունները համոզված են, որ ոչ ինքնաշխատ լիցենզավորման ընթացակարգերը վարչարարության առումով չպետք է ավելի բարդ լինեն, քան անպայմանորեն անհրաժեշտ է համապատասխան միջոցների իրականացման համար;
- ներմուծման լիցենզավորման կանոնների կիրառման չեզոքությունը, արդար ու անաչառ կիրարկումը (հոդված 1, կետ 3) և այլն:

Այս Համաձայնագրի նպատակն է հանդիսանում պարզեցնել ու թափանցիկ դարձնել միջազգային առևտրում կիրառվող վարչական ընթացակարգերն ու գործելակերպերը և ապահովել այդ ընթացակարգերի ու գործելակերպերի արդար ու անաչառ կիրառությունն ու վարումը:

6.1. ՀՀ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Ուսումնասիրելով 2001թ. մայիսի 30-ին ընդունված «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը՝ կարելի է եզրակացնել, որ օրենքի կարգավորման առարկա է համարվում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների սահմանում, լիցենզավորման հետ կապված հարաբերությունների կարգավորումը:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ վերոնշյալ սկզբունքներն ամբողջովին հստակեցված չեն ՀՀ օրենսդրության դրույթներում, թեև օրենքով լիցենզավորման սկզբունքների շարքին են դասվում լիցենզավորման գործընթացի պարզեցումը և թափանցիկության ապահովումը, օրինականության ապահովումը (հոդված 4):

Պետք է սակայն ասել, որ «Լիցենզավորման մասին» օրենքը պարզապես չի անդրադառնում Համաձայնագրում տեղ գտած այնպիսի հասկացությունների ինչպիսին է օրինակ ինքնաշխատ լիցենզավորման հասկացությունն ու ընթացակարգերը՝ դա թողնելով լռելայն իրականացմանը:

Հատկանշական է նաև այն, որ ՆԼԸ համաձայնագրով ստեղծվում է Ներմուծման լիցենզավորման հարցերով հանձնաժողով, որը ժողովներ է գումարում ըստ անհրաժեշտության՝ նպատակ ունենալով, Անդամներին հնարավորություն տալ խորհրդակցելու սույն Համաձայնագրի գործողության կամ դրա նպատակների իրականացմանը նպաստելու հետ՝ կապված ցանկացած հարցի շուրջ (հոդված 4):

Յուրաքանչյուր Անդամ Հանձնաժողովին տեղեկացնում է սույն Համաձայնագրին վերաբերող իր օրենքներում և կանոնակարգերում և այդ օրենքների և կանոնակարգերի կիրարկման մեջ կատարված ցանկացած փոփոխության մասին:

Վերոգրյալն ամփոփելու համար, պետք է ասել, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի և ԱՀԿ փաթեթի այս Համաձայնագրի միջև ընդհանրությունները քիչ են և հիմնականում նրանց միջև հակասություններ չկան: Միևնույն ժամանակ այս ուսումնասիրության շրջանակներից դուրս է մնում այն հարցը, թե արդյոք Հայաստանի Հանրապետությունը պահպանում է այս Համաձայնագրում նախատեսված ծանուցմանը վերաբերող պարտավորությունները, թե՛ ոչ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

Ամփոփելով վերը շարադրածը՝ կարելի է ասել, որ ՀՀ քննության առնված օրենքները իրենց բովանդակային մասով էական հակասություն չեն պարունակում ԱՀԿ համեմատվող համաձայնագրերի հետ: Սակայն միևնույն ժամանակ ակնհայտ են մի շարք տեխնիկական թերացումներ, որոնց շտկումը միայն կնպաստի ՀՀ պայմանագրային պարտավորությունների հավուր պատշաճի իրականացմանը:

Այսպես օրինակ ԱՏԽ, ՄԲՍ և ՆԼԸ համաձայնագրերում ամրագրված տեխնիկական կանոնակարգերի լիարժեք ամրագրումը ՀՀ համապատասխան օրենքներում, ինչպես նաև Համաձայնագրերի ողջ փաթեթում ընդգծված ծանուցման և թափանցիկության սկզբունքների ապահովումը համապատասխան ինստիտուտների ստեղծման և գործողությունների իրականացման միջոցով:

Խոսելով ուսումնասիրության շրջանակում ընդգրկված մի շարք այլ օրենքների մասին կարող ենք պնդել, որ նրանք իրենց Էությունմբ բացարձակապես առնչություն չունեն ուսումնասիրության հորիզոնում գտնվող Համաձայնագրերի հետ:

Այսպես, հաշվի առնելով Սանիտարական և Բուսասանիտարական միջոցների մասին Համաձայնագրի բնութագրիչ գծերը և ուսումնասիրելով 2006թ.-ի «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» օրենքը՝ կարող ենք հանգել հետևյալին:

Հիշատակված Օրենքը հիմնված է «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության վրա: Օրենքն անրադառնում է օզոնային շերտը քայքայող նյութերին և նշում է, որ դրանք քիմիական նյութեր են, որոնք ցուցաբերում են կամ ունակ են ցուցաբերելու ոչ բարենպաստ ազդեցություն օզոնային շերտի վրա՝ մաքուր վիճակում կամ խառնուրդներում, որոնց միավոր զանգվածում օզոն քայքայող մաքուր նյութերի քանակը մեկ տոկոսից ավելի է: Մթնոլորտային օզոնի շերտի քայքայումը միջազգային հանրության խնդիրներից է, քանի որ մեծապես ազդում է ամբողջ աշխարհի մարդկության առողջությանը:

Համաձայնագիրը տվյալ խնդրին առնչվում է այնքանով, որ արժարժու է բնակչության առողջության պաշտպանության համար անհրաժեշտ սանհիտարական միջոցները, այսինքն՝ այդ միջոցները կիրառվում են նաև մթնոլորտի օզոնային շերտի՝ այն քայքայող նյութերից պաշտպանության համար:

Պարզ է դառնում, որ ուսումնասիրության այս օրենքը, իր բուն էությունը, իր մեջ չի արտացոլում Համաձայնագիրը: Այն ավելի շատ արտահայտում է այն խնդիրներից մեկը, որի վերացմանն ուղղված է այն:

Նմանապես, «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը վերաբերում է պարենային անվտանգության ապահովմանը, պետության պարենային քաղաքականության ապահովմանը, պարենային շուկայի պետական հսկողությանը և օրենքի դրույթները չպահպանելու դեպքում վրա հասնող հետևանքներին: Այն իր դրույթներով որևէ կերպ չի առնչվում Համաձայնագրով նախատեսված դրույթներին: Վերջիններս, ինչպես արդեն նշել ենք, կարգավորում են սանհիտարական և բուսասանհիտարական միջոցների կիրառումը, նպատակ ունեն պահպանել մարդկանց, կենդանիների, բուսական աշխարհի կյանքն ու առողջությունը: Փաստացի օրենքը չի առնչվում Համաձայնագրին ոչ իր նպատակներով, ոչ էլ իր կողմից կարգավորվող առարկայով:

Ինչ վերաբերվում է ՀՀ Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին և Բնապահպանական վճարներից դրույթաչափերի մասին օրենքին, ապա պետք է ասել, որ նրանց համեմատությունը ՄԱԳՀ համաձայնագրի հետ փոքր ինչ չիմասավորված բնույթ կկրեր, քանի որ ՄԱԳՀ Համաձայնագրում ամրագրված են նախ և առաջ սկզբունքներ և ոչ թե կոնկրետ թվեր ու գումարներ: Այս առումով Բնապահպանական վճարներից դրույթաչափերի մասին ՀՀ օրենքի մասով կարելի է ասել, որ վերջինիս և GATT համապատասխանության լրիվ պատկերը ստանալու համար անհրաժեշտ կլիներ համեմատել ԱՀԿ անդամ-պետությունների նմանատիպ օրենքները, դրանցում ամրագրված դրույթները և միայն այնուհետև եզրակացնել, թե արդյոք ՀՀ օրենքը հակասում է ՄԱԳՀ-ի, իսկ տվյալ պարագայում արդեն կազմակերպության սկզբունքներին թե ոչ:

ՀՀ Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին օրենքի մասով կարելի է ասել միայն այն, որ թեև այն խտրական վերաբերմունքի չի սահմանում վճարողների նկատմամբ, սակայն ուրվագծում է նաև արտոնությունների շրջանակ ֆիզիկական անձանց, տարանցիկ փոխադրումների իրականացնողների և մի շարք խմբերի համար, սակայն դրանք սկզբունքային առնչություն չունեն ՄԱԳՀ դրույթների և մոտեցումների հետ:

Իհարկե պետք է ևս մեկ անգամ նշել, որ ՀՀ-ում սահմանադրորեն ամրագրված է, որ ՀՀ-ում միջազգային նորմը գերակայություն է ստանում ազգային օրենսդրության ցանկացած դրույթի նկատմամբ: Ամեն պարագայում, հաշվի առնելով ԱՀԿ պայմանագրերի իրականացման խճողված համակարգը, ինչպես նաև սույն հետազոտության շրջանակներում չընդգրկված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը՝ պետք է պնդել, որ նման գործողությունները միայն կհստակեցնեն և ավելի դյուրին կդարձնեն ՀՀ պարտավորությունների կատարումը:



GLOBAL SPC

BUSINESS & LEGAL CONSULTING

Գլոբալ Էս-Փի-Սի, Մոսկովյան 24, #1, Երևան, ԶԶ 0002,
հեռ. (374 10) 52 08 51, Էլ-փոստ: info@globalspc.am,
Էլ. կայք: www.globalspc.am